



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

15647

15648

15649

15650

891-99

7-29

предупреждение
всегда, "Чайоты"
меня не боялись

и я имел
возможность

2003

Aug 14.
8234.

предупреждение
всегда, "Чайоты"
меня не боялись

и я имел
возможность

2003

1828. № 3

ՀԵՂԵԾ ԵՐԿՐՈՒ


891.99

Դ-

ՀԱՅ

ԵԱՐԱԳԵԱԼ ՀԱՅԱՍՏԱՆ :

ՊԻՏԱԿԻՆ ԲՈՆԱՏԵՂՄԱԹԻՒՆ :



Ա. ՊԵՏԵՐՅԱՆԻ

ԹԱՓՈՑԵԼ ՊԱՏԿԱՆԵՑՆ ՑՊԱՐԱՆԻՄ

1864

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ.

Կաւարշ երկրորդի անգըլը սլատահել է Քրիստոսի ծնունդին 1182 տարի առաջ, երբ որ Յունաց ազգի թագաւորները մեծ բազմութեամբ կառքերու և հետեւակ զօրաց՝ շատ նաւերով անց էին կացել Միջերկրեայ (Ճերմակ) ծովին, և եկել էին Եւրոպային՝ Ասիա, և սլաշարել էին Փոխուղիա գաւառումը Տրոյա (Էսէն Սփամուլ) հոչակաւոր մայրաքաղաքը։ Այս քաղաքի թագաւորին Պրիամոսին՝ օդնութիւն էր դնացել Հայոց Զարմայր Նահասետը՝ երեսուն հազար Հայազգի զօրքով, և ուժը տարի Յունաց դիւցաղանց դէմ սկատերազմելէն յետ, երբ որ Հենան կամ Տրոյէլու (*) քաջարի արքայորդին Աքիլէսի սուրէն Խողիսողուեցաւ, և Պահմանէլ Ամազոնաց թագուհին-էլ նոյնական

(*) Հին Պատմութիւններու մէջէն երեսոմ է, որ Հոմերոս բանաստեղծը իւր Եղիսական քերթուածոյ մէջ Հեկտորի ու Տրոյիլոսի անցքերը խառնելով՝ կամեցել է Աքիլէսի քաջութեան աւելի հռչակ տալ։ Թէսկէտ Հեկտոր-էլ Աքիլէսի ձեռքէն մեռաւ, Տրոյիլոս-էլ, որ ասվում էր միւս ևս Հեկտոր, բայց անցըն այսպէս է եղել։ Ագամեմնոն և Աքիլէս մէկ աղջկայ համար կըռուել են, Աքիլէս խռովէլ է և սկատերազմէն հեռացել։ Աքիլէսի բարեկամ Պատրոկլը՝ Աքիլէսի զրահները հագած՝ խարել է Տրոյացոց և շատ յաղթութիւն է արել առաջ. բայց յետոյ Հետարի սուրին սկատահելով սպանուել է։ Աքիլէսը իւր բարեկամի կըսկիծէն բորբոքուելով՝ մտել է նորէն սկատել ազմ և Հեկտորին սպանել։ Հեկտորի յուղարկաւորութեան օրերը Աքիլէս տեսել է Պրիամոսի դստերը Պոլիքսէնային, և ուղեցել է հարսնութիւն։ Պրիամոս տուած չէ, ուզում է եղել Զարմայրին տալ։ Այս սկատճառաւ Աքիլէսն-էլ Տրոյիլոսին է սպանել, և կառքի ետևեն կապած քաղաքի չորս սկտոյտը ման բերել։ Տրոյիլոսի դիակի վրայ է եղել այն կռիւները, ուր որ Մեմնոն, Պանթազէլէ և Զարմայր և ինքը Աքիլէսը խոցուեցան։ Տրոյիլոսի դիակը ուղելու որ եկել է Պրիամոս Յունաց բանակ, որովհետեւ Զարմայրի մեռնիլը արդէն իմացուել էր. Խոստացել է Աքիլէսին տալ Պոլիքսէնային։ Եւ երբ որ Աքիլէսը առողջանալէն յետ դնացել է Տրոյա Պոլիքսէնային ամուսնանալ, տաճարի մէջ Պարիս գարան դրած լինելով Աքիլէսին մահու վերք է տուել։ Այս սկատճառաւ Այաքսն-էլ Պարիսին է սպանել սկատերազմի մէջ։ Տրոյիայի առնելէն յետ Աքիլէսի որդի Պիռոսը իւր հօր դերեզմանի վրայ Պոլիքսէնայ օրիորդին մատաղի ուես մորթել է։

ՀԵԿՈՅԸ Բ.

ԿԱՄ

ՆՈՐՈԳԵԱԼ ՀԱՅԱՍՏԱՆ

ԵՐԻ Ա.

Չարագուշակ թօթ սըդալի գումեց յանկանջս Արամեանց,
Եթէ Զարմայր Նահապետը, որ պարծանք էր Հայկազանց,
Եղիոնեան մարտի մէջը ծաղկեալ կեանքը զըրաւեց,
Գքնաղ տիկնոջ այրիութեամբ, դուստր ու որդին որբ թողեց:

Հայաստանը դառն արտասուօք այս կորուստը սըդացաւ,
Ուրախութեան զարդարանքը իւր վըրայէն մերկացաւ.
Հառաչանքը, հեկեկանքը ամեն խորշեր լցուեցան:
Աև մութ ծածկեց ամեն սրտեր, հոգիները թախծեցան:

Օ արմայրը չէր այն մարդոցմէն, որ շուտ լինէր կարելի
Նմանատիպն տեղը դընել և ըսփոփել սիրտ ազգի.
Քաջութիւնն, գեղեցկութիւնն, տնտեսութիւնն իմաստուն,
Յոյս չէր տալիս ազգին նմանն փոխանակել փոյթ, իսկոյն:

Եւագանին, աղգապետքը ժողովուել են Արմաւիր,
Ազգն անգըլուխ է մընացել, անտէր, որբուկ է երկիր.
Նահապետ են ուղում ընտրել, Զարմայր չունի ժառանգորդ,
Ութ տարեկան անզօր մանուկ չէ ընդունվում հօր յաջորդ:

Հայաստանին հարկաւոր է Զարմայրի պէս այր հըզօր,
Որ անունէն միայն սարսին, ու լինի միշտ ահաւոր.
Մարք, Ասորիք՝ հարաւ-կուսէն, Ալանք, Սարմատք՝ հիւսիսէ՝
Հայաստանին են գլխահար, մարդ պիտի որ հալածէ:

Օերք, նահապետք և աղգասէրք՝ արժանաւորն են պտում,
Որ աղգայնոց մըխիթարէ, փարատէ սուզն անպատում:
Երիտասարդք իրանց գլուխը ձըգում են մէջ ընտրութեան,
Այնպէս անձինք չեն ընդունում աղդ և երկիր Հայկական:

Յոլակ տիրող Մաղլսաղունեաց՝ շատ մարդ ունէր իւր կողմը,
Կամենում էր տիրապետել՝ Հայկ Արամայ երկրումը,
Բայց այլ որեարք և աղդապետք այս խորհրդոյն չեն հաւան,
Նա չէ այն մարդ, որում կարօտ է այս միջոց Հայաստան։

Աէկ ձայն-էլ կայ ամբոխի մէջ՝ թէ ճնա կը լի տէր երկրի,
Ով որ առնու ի կը նութիւն որբուկ դուստրն Զարմայրի։
Արմիկ դշխոյն հըրաշագեղ սուրբ էր սկահում իւր սիրտը,
Սէրը դեռ չէր լարել ուժգին նորա հոգւոյն իւր նետը։

Յոլակ ուղել էր դշխոյին տիկին մօրէն հարսնութեան,
Բամբիշն չէր յօժարացել, զործոյն դարձել էր խափան.
Հասկացել էր որ իւր դուստրը չէր կամենում լինել կին,
Այն փառասէր, սէդ ու խենէշ երիտասարդ Ցոլոկին։

Այլ Ցոլակը չըհանդարտեց, զօրք ժողովեց, զօրացաւ,
իւր մերձակայ կալուածատեարց երկրաց վերայ բռնացաւ.
Կամենում էր դէալ Արարատ իւր բանակին գրոհ տալ,
Մայրաքաղաք Արմաւիրին, և դշխոյին տիրանալ։

Դերակոյտը, որ կառավար էր այն մեծի աշխարհին,
Կամենում էր մէկ մարդ ընտրել, որ կանգնի դէմ Ցոլակին.
Հզօր մարդիկ թէպէտ կային, բայց չեն արժան ընտրութեան,
Կասկած կար թէ՝ յետ ընտրութեան՝ աղդի դէմ կը բռնանան։

Ներ, Զարեւանդ աշխարհաց տէր ՇԱԽԱՐԾ շրքեղ պատանի,
Խոհեմ, զգօն ամենայն տեղ, անպարտելի ի մարտի։
Երևելի էր աղդի մէջ, և եկել էր Արմաւիր,
Երբ աղդասէրք ժողովուեցան հասարակաց կարեկիր։

Վւագանիք այդ հանձարել, քաջ պատանւոյն ընտրեցին,
Որ նա լինի զօրաժողով, և դուրս գայ դէմ Ցոլակին.
Այն էր խորհուրդ ծերակուտին, որ թէ յաղթէ բռնութեան,
Նորան կարգեն իսկ նահապէտ՝ ժառանդ գահին Արամեան։

Կահապետաց դարպասումը, ուր կայր այրին Զարմայրի,
Եղաւ ժողով աղդապետաց՝ ծերոց աղդին և երկրի.
Լայնածաւալ դահլիճի մէջ աղդասէրքը ժողովուած,
Կան աղդային խորհրդոց մէջ եռանդագին զբաղած։

Այսաբերան հաստատեցին Շաւարշին տաւ իրաւունք,
Զօրք ժողովել դէմ բռնութեան, մինչ բռնացած չեն բաղումք:
Պատգամաւոր առաքեցին, որ Շաւարշ շուտ կայ ժողով...
Եկաւ իսկոյն և ծերերէն ընդունուեցաւ նա պատուով:

Ի՞ազմեցուցին ծերոց կարգը, մեծարանօք խօսեցան,
Ողջոյն տուին զուարթերես, և մի առ մի նստեցան.
Այլ այս յարգանք ընդունում էր պատկառանօք այն քաջը,
Դեռ չըգիտէր, թէ ինչ ունի լըսել իրա ականջը:

Երբ լըոեցին ամենեքեան, մէկն ըսկըսաւ խօսելու,
Սըրան յանձնած էր երկիրը առ ժամանակ պահելու.
Ազգապետ էր Ախսականաց՝ Փառոխ տրի Գեղամեան,
Ազգասիրաց առաջին էր, և բարեկամ հայրենեան:
— Հաւարշ շըքեղ, քաջակորով, ասաց Փառոխ ծերունին,
Ես բերան եմ Հայաստանի, պատգամաւոր Հոյ ազգին.
Ինչ որ ունիմ քեղ ասելու, այն ցանկութիւնն է Հոյոց,
Ես միջնորդ եմ նոցա կողմէն, յայտնող նոցա հայցուածոց:

» Խններորդ ամէ, աւասիկ, որ Նահապետ Զարմայրը
Երեք չորս րիւր մարդով գընաց Փոխոգիոյ գաւառը,
Ուր ազգ Յունաց արևմտեան կղզիներսւմ բնակուած,
Դարդանոնի ծովեզեքը մարտ ու կըոխ են եկած:

» Թէպէտ օտար ազգաց կուլում մեղ խառնուիլ չէր պիտոյ,
Բայց խորամանկ Ասորեստան գտաւ իւր ժամ պարապոյ.
Մեր քիւրաւորք Հայաստանէն աշխարհքի ծայր հեռացրեց.
Մեր գաւառքը սահմանակից իւր տէրութեան գրաւեց.

» Ինդունայն էր և իսկ պատճառն արիւնայեղց այն մարտի.
Միայն նախանձ և յաշաղանք ծագեալ ի մէջ Յոյն ազգի.
Արևմտեան Հէլլէնացիք ունին նախանձ աղդային
Արևելեան Յունաց ընդդէմ, այն պատճառաւ կուկուին:

» Դեռ ևս այն բաղմակործան կըոխ չէ վերջացած,
Ինն տարի Տըրովադայ քաղաքը կայ պաշարած.
Պըրիամոս թագաւորը և քաջ որդիք գիւցաղունք,
Մարտնչում են ընդդէմ Յունաց, անհամար են յաղթութիւնք:

„**Γ**ατ θωρακορρε όπουναց ζετε έν, γατην-էլ ήρωασιν Στρυμόνι,
Այս քաղաքը ζητορ է յոյժ, վասն այն բազմաց անհաճոյ. գիտ
Ասիայի առուտուրը՝ գո'դ՝ այս տեղ է ժողովուած,
Հարուստ է յոյժ տէրութիւնը, բնակիչք են ձոխացած.

„**Պ**ըրիամոս թωρακορρε բարեկամբ-էլ շատ ունի,
Համարեալ թէ Փոքր-Ասիայ նպաստ հասաւ Եղիոնի.
Տետամոս-էլ էր հրաւիրուած, բայց նա զրկեց Մեմնոնին,
Եթովպացոց արքայորդւոյն յանձնն եղաւ Ասորին:

Մեր նահապետ՝ քաջն Զարմայր՝ նըպաստ կոչուած էր այնտեղ,
Չէր կամենում Հայաստանը որբուկ թողուլ այն զօրեղ.
Բայց Տետամոս՝ թωρακορρε Միջագետաց աշխարհի՝
Խնդրեց նըրան, որ ուղեկից լինի արւոյն Մեմնոնի:

Մեմնոն, Զարմայր, և այլ քաջեր շատ՝ տարաժամ տնդ մեռան,
Երսուն հազար երիտասարդք օտար երկրում թաղուեցան.
Հայաստանը մընաց լալով, հօրն ու որդոց կորցըրեց,
Երեք բիւր տուն, այս պատճառով զաւակներէն որբացըրեց:

Հայաստանը այժմ սըդով և թախիծով սեացած,
Տեսնում է որ զօրացել են ամեն տեղ ջոկք թշնամեաց,
Գրսէն օտարք են գիշատում, ներսէն տանջում բռնաւորք,
Ցոլակի հետ շատ կան կըցորդ սւագորեարք փառաւորք:

Այս նեղութեան ժամանակին Հայաստանին պէտք է տէր,
Մեր հայրենին մընացել է անօդնական և անտէր,
Քեզ է լնտրում այս միջոցին՝ քաջիկ Շաւարշ՝ Հայաստան,
Դու հայրենեաց պիտի բանաս դրօշակըն փրկութեան:

Մենք յօյս ունինք որ դու աղգի՝ արդարացնես ընտրութիւն,
Մարտի մէջը ցոյց տաս նախնեաց քո սեսհական արութիւն.
Հայաստանին խընամք տանիս, և արտասոք մեր սրբես,
Մեր աշխարհի գիշատողաց սահմաններէն հալածես:

Արի՛ Շաւարշ՝ առ դու ծերոց՝ աղգապետաց օրհնութիւն,
Սկիզբն արա՝ ցոյց տալ բազկիդ անպարտելի զօրութիւն,
Քեզ տըրիտուր կը լինի աղգի գոհութիւնը անքանակ,
Յաւէժ պիտի մընայ անուան քո արութեան յիշառուկ:

Ե Ր Գ Բ.

Փառիսայ խօսքն վշտացնում էր Համեստութիւն Շաւարշայ,
Զէր Համարում իրան արժան յաջորդ լինել Զարմայրայ.
Երկու ծընկաց վերայ չոքեց, պատասխան ետ ծերունոյն,
Ամենեքեան տեսնում էին նորա պարկեշտ հեղութիւն:

—Ինձ դու ալիտի, Հայրիկ Փառիս, Երկայնամիտ արդ լինիս,
Եւ խընամով ականջ դընես խոնարհաղէմ իմ ձայնիս.
Հայատանին չէ ներելի, որ նա արդ ինձ կարօտի, և անարժան եմ այդ կոչման՝ յոր կոչում է կամք աղդի:

„Ո՞իթէ ինձ պէս տըկար մանուկ գըլուխ զօրաց կուղառնայ,
Այն քաջայաղթ զինուորներուն, որ ընդ ձեռամբ Զարմայրայ
Սարսեցնում էր բոլոր աշխարհ, և Կովկասեան սարերէն
Մինչ ի Տորոս ապահոված էր Երկսայրի սուրերէն:

„Ես պատրաստ եմ պատերազմիլ Հանապազ դէմ ատելեաց,
Զօրավարել չեմ յանդգնիր Ասքանազեան քաջ զօրաց.
Ու որ լինի զօրագըլուխ, ես եմ նախկին մարտիկը,
իւր Հայրենեաց թող զոհ լինի մատաղաւորց Շաւարշ:

„Ի՞այց թէ Հարկիւ բոնադատէք, որ ես լինիմ զօրավար,
Եւ ելանեմ դէմ թշնամոցն, լինիմ նորան գլխահար, և անեայ ոյ
Ես պարզ ասեմ, չեմ բաւական այդ պաշտօնը կատարել, և ան
Արամեան զօրք չեմ յօժարիր ամօթապարտ լըքանել:

„Դուք դատեցէք, Հարք ծերունիք, ներելի է մեք աղդին,
Ու զօրավար լինի նորա ինձպէս անզօր պատանին. ոյսուոք ի՞ն
Եւ Զարմայրի տեղը բռնէ այն դեռահաս մանուկը,
Որ դեռ չունի ուժ սանձարկել իւր սեպհական նըժոյդը:

ոթէ չըլինէր Զարմայր ընկեր Հէլլէնացոց դիւցազանց,
Աքիլլէսի և Հեկտորի ընաշխարհիկ վեհ արանց. անզաց զավթ
Կարելի էր որ յուսայի թէ զօրավար որ լինիմ, և անօդան չի
Մէկ ժամանակ կարողանամ լինել օգուտ աղդին իմ:

„Բայց Զարմայրը հանդիսացած էր քաջարեաց դասումը,
Հսկայից մէջ երեելի էր նորա քաջ անունը.
Ինչ համբաւներ էին թերում պատերազմէն յետ դարձողք,
թէ ի՞նչ պատիւ էին տալիս անպարտելոյն միշտ յաղթողք:

„Ճաշ ու ընթրիք Պըրիամոս նորան կշտէն չէր թողնում,
Նորա մէջը իւր աթոռոյ կաղղուրիչն էր դտանում.
Հեկտորին-էլ պատուիրում էր, որ միշտ նըրան հետևի,
թէ! խորհրդոց, թէ! մարտի մէջ՝ նորամէն չի որոշուի.

„Էլլէնացիք, երբ մարտադուլ էր մէջերը հանդիպում,
Հատ ժամանակ մեծ բազմութեամբ էին Տրոյիա ժողովվում,
Մէկ օր տեսանք, որ Աքիլլէս Զարմայրի հետ խօսում էր,
Եւ նորա քաջ արութիւնքը համեստութեամբ գովում էր:

„Ուետաղացին ասաց նորան՝ Զայոց Նահապետ,
Ես Յունաց հետ դէմ Տրոյիոյ մարտիւ եկել եմ թէպէտ,
Բայց երջանիկ կըհամրէի ինձ, թէ քեզ հետ լինէի
Նիղակակից այս քաղաքի, և ոչ քաջիդ թշնամի:

„Բայց երբ մէկ օր Ելիոնում հացկերոյթ էր քաջերին,
Պըրիամոս նստեցրել էր իւր աջ կողմը Զարմայրին.
Զարմայրի մօտ միայն ուղեց նստել քաջն Աքիլլէս,
Եւ յայտնապէս ասաց թէ սա՝ է մեր օրուան Հերակլէս:

„Այս որ լըսեց Պըրիամոս, ասաց քաջիկ Զարմայրին,
Ես կամում եմ քեզ հարսնութիւն տուլ իմ դստրիկ Պոլիքսին.
Բայց ի՞նչ անեմ, որ դու չուզես երկու կընիկ ունենալ,
Կամ քու կընոջ սէրը սրտէդ հանել իսպառ, մոռանալ:

„Օ արմայր ասաց՝ ես, Թագաւոր, Համկին ունիմ, Համ զաւակ,
Մէկ դուստր ունիմ ութ տարեկան, և կաթնկեր մէկ որդեակ.
Թէ կամենաս Աքիլլէսին տուր Պոլիքսէն դշխոյին,
Որ հաշութիւն լինի ձեր մէջ և Յունաստան աշխարհին:

„Երբ որ լըսեն Տրոյիացիք, Հէլլէնացիք այս բանքը,
Պիտի շարժեն գլուխները, և բամբասեն մեր ազգը.
Թէ արծուոյ տեղը բոնել է մէկ հատ ճանճ փանաքի,
Եւ առիւծին փոխանակել է նապաստակ ըքոտի:

„Կամ աղգը ի՞նչ աչքով պիտի վերաս նայի ու խնդայ,
Երբ ինձ տեսնէ թէ զօրավար եմ փոխանակ Զարմայրայ.
Քաջ ջոլակին քան զիս աւել բիւրապատիկ չի հաշուիր,
Եւ նորա ձեռքն միանալով՝ ընդդէմ իմ չի զօրացնիր։”

„Թէ ջոլակին չէք կամենում, պատգամաւ որ զրկեցէք,
Առանց մարտի, հեղման արեան՝ խաղաղութիւն հաստեցէք.
Բայց ջոլակի պակասութիւնն ի՞նչ է, որ չէք կամենում,
Աղգի կէսը համարեա թէ նորա յետնէն է գընում։”

Սյստեղ Փառոխ բռնեց թելը, պատասխանեց Շաւարշայ,
Ասաց՝—Աղգին անտանելի է բռնութիւն ջոլակայ.
Բայց ի՞նչ ասիր քաջ Զարմայրի համար, ամեն բարոք էր,
Երանի թէ Զարմայր բընաւ այն մարտի մէջ մըտած չէր։

„Այժմ աղգը քեզ է սւզում Զարմայրի տեղ ունենալ,
Եւ յոյս ունի, որ դու կարես աղգի լացին վախճան տալ.
Թէ դու այնչափ մեծ ես համրում քու սրտի մէջ Զարմայրին,
Ուրեմն կարես լինիլ նրման այն քաջաղօր դիւշաղնին։”

„Մենք աւելի ուրախացանք, որ քու սիրտը ձանջրցանք,
Մեր ուղեցած զօրապետը դու ես, այդ կուկամենանք.
Գիտենք որ դու կը հետևիս բարի գործոց Զարմայրին,
Երբ այդքան մեծ է քու սրտում բարի համրաւ այն քաջին։”

—Եթէ միայն կամենալով, պատասխանեց Շաւարշը,
Հընար լինէր ուղղել աղգի ծոռւած կարգաց վիճակը,
Արդարև ես կը լինէի ձեր ուղեցած քաջարին,
Իմ սրբտի մէջ կայ ցանկութիւն, որ նըմանիմ այն քաջին։”

„Բայց գիտեմ որ՝ կամենալով միայն ոչինչ չէ հընար,
Կամենալու հետ կարենալ-էլ պիտոյ է քաջաբար.
Ի՞նչպէս առնում ես ինձ վերայ այն ահագին ծանրութիւն,
Որ բաւական ոչ ոյժ ունիմ, ոչ բաւական զօրութիւն։”

Փառոխ ասաց—Շըքեղ Շաւարշ, քո զօրութիւն յայտնի է,
Դու հըզօր ես տմենայն տեղ, ուրանալ ոք ոչ կարէ.
Համեստ և հեղ ես բընութեամբ, վասն այն լըսել չես կամում,
Այդ պատճառաւ չեմ յուսահատ, և դարձեալ քեզեմ կրկնում։”

„Քեզ վերայ է աչքը դըքել աղդ և երկիր բովանդակ, Պարկեշտիւն քո միայն է աղդի կամքին խոչընդակ, Երբ դու լինիս զօրագըլուխ, Ցոլակ ինքը կու փախչի, Ոչ թէ պայքար մարտի կուդայ, այլ ծածուկ տեղ կութաքչի:

„Մենք Ցոլակի հետ գործ չունինք, որ շատ կամ քիչ աղաչենք, Ցոլակի դէմ քաջ առիւծիդ պատերազմի կըհանենք. Հայոց աղդի ընտրութիւնը քու անձին մէջ չի խարուիր, Քեզ է ընտրել իւր զօրավար, իւր խօսքը յետ չի դընիր:

„Քո հասակն-էլ չէ մանկական, քսան և չորս ամաց ես, Զօրավարել դէմ բոնութեան՝ ամեն կերպով կարող ես. Բարետոհմիկ ես դու աղդաւ, Հայկ, Արամայ շառաւիդ, Չէ սըսալուած աղդըն Հայոց, ընտրութիւնը է ուղիղ:

„Երբ որ այսքան ծերք, մեծամեծք և գլխաւորք Հայ աղդի՝ Քեզ զօրավար են ընդունում, Էլ ի՞նչ կայ քեզ խօսելի. Աղդըն քո է, դու աղդինն ես, այս է նորա ցանկութիւն. Պարտական ես հընազանդիլ և ցոյց տալ քո քաջութիւն:

— Ծառայելին չեմ ես փախչում, վըկայ լինին քաջք Մասեաց, Վախենում եմ թէ իմ աղդը ծաղը չընի այլ աղդաց. Վըրէս առնում այդ մեծ պաշտօն, և ամօթով լի մընամ, ի՞նչ պարծանք է իմ անունիս, ի՞նչ պատասխան աղդիս տամ:

— Աղդն է այժմ քեզ ընտրողը, դու չես մընար պարտական, Փառոխ կըտրեց նորա խօսքը, տուեց բանին պատասխան: Շաւարշ ասաց. ինձ ժամանակ տուէք՝ փոքր ինչ մըտածել. Ես չեմ կարող աչքըն փակած՝ այս փորձանքը մըտանել:

Փառոխ ասաց՝ քեզ ժամանակ աչա տուինք երեք ժամ, Գընա, արի, և մեր խօսքը պիտի լըսես դու յայնժամ. Արդ զօրավար ես ընտրվում, գուցէ կընտրէ նահասետ, Աղդի կամաց է ապաստան, ինքնընտիրք-էլ կան թէպէտ:

ԵԲԳ Գ.

Երբ դարպասէն ելաւ Շաւարշ, գընաց կամաց գէտ դաշտը,
Ճաշու ժամը դեռ չէր հասած, մէնակ շրջէր Շաւարշը,
Պատահեցաւ մէկ ծերունոյ, ողջոյն տուին իրերաց,
Մէկ ծառի տակ ըստուերի մէջ նստան վերաց դալարաց:

Ասաց ծերը, ով պատահի, քաղաքումը նոր ի՞նչ կայ,
Արդեօք աղդը ընտրեց ինքեան նահապետ ի գահ Հայկաց,
Մեր աղդասէրք մեծ ջանք ունին այս նուազի ընտրութեան,
Որ Զարմայրի տեղը գրանեն խնամող երկրին Հայկաղեան.

Ով ծերունի, ասաց Շաւարշ, Զարմայրի պէս մարդ ո՞ւր է,
Որ կարենայ Զարմայր դառնալ, և խեղճ աղդին խընամէ.
Ծերոց մէջն կարելի է, թէ գըտնըլի մէկ հատը,
Երիտասարդք յոյս չեն տալիս, ինչպէս ահա Ցոլակը:

Օսերը ասաց, Ցոլակը չէ արդ ընտրութեան արժանի,
Աղդի ըուղելն և մերժելըն արդար է և իրաւի.
Այս բանի մէջ ատելութիւն և կամ նախանձ չէ ծածկած,
Ցոլակը իւր դաժան բարուք աղդի մէջ է անարգուած:

Ի՞սյց ասում են թէ կայ մէկ հատ բարետոհմիկ սլատանի,
Շաւարշ անուն՝ ժառանգաւոր Հեր-Զարևանդ աշխարհի.
Նորա համար ամենեքեան են համաձայն գովարան,
Նորա վերայ է աղդի աչք, նորա՝ վիճակ ընտրութեան:

Շաւարշ ասաց, նա մանուկ է՝ աղդին ի՞նչպէս խընամէ,
Միթէ նա՞ է, որ Զարմայրի պակասութիւնն լըքըընէ.
Ես Շաւարշին ճանաչում եմ, մէկ տղայ է իմ տարօք,
Զունի ոչինչ առանձին ձիրք՝ ոչ քաջութեամբ, ոչ վառօք:

Օսերը ասաց, որդեակ՝ այդպէս մարդու համար մի դատիր,
Մարդու ներքին լաւ քանքարը աչքի միշտ չի երևիր,
Դու հաւատա՛ մեր ծերերուն, նոքա լաւ կուճանաչեն,
Հոգւոյ մէջը ինչ կայ, չըկայ, հոգւոյ աչքով կըտեսնեն:

Qարմայրին-էլ՝ ով էր ընտրել, էլի մեր այս ծերունիք,
Նա-էլ այնպէս պատահի էր՝ ինչպէս որ այլ պատահիք.
Գործը իրեն ձեռքը առաւ, յայտնեց ծերոց հանձարը,
Գահի վերայ երևեցան Զարմայրի լաւ ձիրքերը:

Cյսպէս Շաւարշ-էլ՝ դեռաւուրց, բայց մըտօք է հանձարեղ,
Կերպարանօք է գեղեցիկ, անպարտելի և զօրեղ.
Գանձ ճոխութիւն-էլ շատ ունի, չինիր աղգին կեղեքիչ,
Ես-էլ ուժսուն տարեկան եմ, բան տեսել եմ շատ ու քիչ:

Aնահաջողը շատ են գովում և ասում են ամեն-տեղ,
Թէ Զարմայրէն-էլ աւելի է նա վրսեմ և շրքեղ.
Ինքն վարուք առաքինի, չարագործաց ատեցող,
Բարեգործաց միշտ ձեռնտու, լաւաց նսլաստ և սիրող:

Cյոքան չքնաղ իւր ձիրքերով է նա գահին արժանի,
Մեր աղգին-էլ այդ է այժմիկ հարկաւոր ու պիտանի.
Ի հարկէ-որ դեռ չի ասուիր, թէ ողջացաւ Զարմայրը,
Բայց կարծեմ լաւ աստղի տակ է ծընել սըրան իւր մայրը:

Cաւարշ ասաց, խեղճ աստղերը ի՞նչ գործ ունին մեր հետը,
Լաւը լաւ է իւր գործքերով, իւր համար վատ է վատը.
Ո՛չ արեգակ, ո՛չ լուսնիակ, և ոչ փայլուն աստղերը,
Կարեն երբէք փոխել բընիկ մեր վարքերը, բարքերը:

Zէ՛, մի՛ ասիր, այ դեռաւուրց չքնաղագեղ պատանի,
Ասաց ծերը, երբ-որ լըսեց պատասխանը Շաւարշի.
Ես տեսնում եմ, որ դու խելօք և ողջամիտ ես դատում,
Վասն այն ես քեզ սըրտիս ծածուկ բանըն յայտնել եմ ուզում:

Tես հովիւ եմ խաշնաղարման, իմ կեանք անցաւ դաշտումը,
Պարզ երկինքը էր իմ սիրած ըզքոսարան գիշերը.
Ես աստղերը Ճանաչում-եմ, անուններըն-էլ գիտեմ,
Նոցա դիրքէն ասլագայքը դուշակելու կարող եմ:

Nրդեակ՝ երկար քըննութիւնը ինձ աստղաբաշխ է արել,
Հաղարաւոր փորձ զըննութիւն իմ մըտաց մէջ հաստատել.
Թէ աստղերէն կարելի է Ճանաչել բան ապառնի,
Այլոց համար ես հովիւ եմ, բայց գիտելի է պիտանի:

Այս առաւօտ արեելեան կողմըն մէկ հատ աստըլ կայր,
Որոյ տուտը դէպի երկինք տւելի պէս կը ցոլայր.
Փայլածուն կայր իւր տեղումը, և արուսեակ աստղ սիրոյն,
Երեսակի հետ կազմում էր խորհրդաւոր եռանկիւն:

Չաւարշ ասաց, հայրիկ՝ ասա՛, ի՞նչ էր խորհուրդ աստեղաց,
Որ այդպիսի եռանկիւնի էին դիրքով ձևացրած.
Այն տըտաւոր աստղը ի՞նչ է, կը բա՞կ է թէ այլ բան է,
Աղաչում եմ քեզ՝ ծերունի, այդ բաները ինձ պատմէ:

Այն ծերունին՝ որ մինչև ցայժմ էր կը ուղացած կուղիան,
Յանկարծ գըլուխն վեր բարձրացրեց, թիկունք մէջքը ուղղեցան,
Աչքերէն բոց էր դուրս գալիս, երեսները փայլում են,
Անակընկալ վովոխութիւնն զարմանք առաւ Շաւարշէն:

Ասաց՝ ո՛րդեակ, ես իմացայ՝ դու ես այն քաջ Շաւարշը,
Եւ քեզ ժառանդ Հայկայ գահի պիտի անէ մեր ազգը.
Դու չե՛ս կարող հրաժարվիլ, ազգի կամքը զօրեղ է,
Նա կամեցաւ՝ նահապետ ես, նորա խօսքը յաղթող է:

Այն տըտաւոր աստղը քո է, քեզ համար է նա ծաղել,
Բոց է թէ հուր՝ ես ըրդիտեմ, ինչպէս միւս աստղերն-էլ
Բայց ինչ գիտեմ՝ ես քեզ կասեմ, ու ասածըս կը լինի,
Ինձ աստղերը պարզ յայտնեցին, թէ ի՞նչ է այժմ կամք երկնի:

Երեսակը մեր նախնին է Հայկն որդի թորդոմայ,
Փայլածուն-էլ մեր ծերերն են շառաւիղեալ յԱրամայ.
Արուսեակը քո հարսնացուն է, որ այսօր կը դրկես,
Դու երջանիկ ես, Քաջ Շաւարշ, և այդ բադդին կը հասնես:

Երեսակը Արուսեկին ասաց՝ որ քեզ հարսնանայ,
Եւ իւր նետով խորհրդաւոր քեզ օդնութեան նըստաստ տայ.
Գարձիր շուտով այն դարպասը, որ տեղաց որ եկել-ես,
Այն-տեղ հարսնդ և հրաշալի Հայկայ նետը կը դտնես:

Այսօր ազգը քեզ նահապետ կանէ ազգին Արամեան,
Փեսայ կասէ քեզ օրիորդ պարծանք կուսից Հայկազեան,
Ցոլակը որ մօտեցել է մայրաքաղաք Արմաւիր,
Քո անունը երբ որ լըսէ, կուզէ փախչիլ իւր երկիր:

Բայց իմացիր՝ այդ ամենայն Հայկայ նետին են արդիւնք,
Հայաստանի բաղդը այն է, նորամէն են յաղթութիւնք.
Ախ՝ թէ Զարմայր տանէր այն նետ իւր հետ յաշխարհ հեռաւոր,
Նա յաղթական կուգար իւր սուն, զուարիթ, ուրախ, փառաւոր:

Տունը բանդուի Զրադաշտի, որ այս բանը հոչակեց,
Եամիրամը այն գողացաւ, որ Արային-էլ յաղթեց.
Անուշաւան իւր հարսնացուի ձեռքով առաւ այն նետը,
Կարողացաւ միւս անդամ տեսնել Հայոց աշխարքը:

Երամ-էլ այն նետով արաւ այնքան մեծ մեծ յաղթութիւն,
Եւ իւր կընոջ վընասակար ոչնչացոյց ժողովութիւն.
Ու-որ գիտէր ինչ զօրութիւն ունի այս նետ հրաշալի,
Միշտ յաղթով էր մարտից մշջը՝ նշանաւոր յաշխարհի:

Ահեգ-օր Զարմայր պատահեցաւ ինձ դարձեալ այս դաշտումը,
Երբ ուզում էր ճանփայ դուրս գալ Պըրիամու կոչումը,
Ինձ հետ շատ բան խօսակցեցաւ, վերջը ես-էլ ասացի,
Որ նա չերթայ Տըրովսդայ առանց անյաղթ այն նետի:

Եյլ չոգիտեմ, թէ ինչ արաւ, արդեօք խօսքը հաւատաց,
Թէ հովիւ եմ՝ արհամարհեց, և իմ ասածն անդուսնեաց.
Բայց չեմ կարծում, նա խելօք էր, կարելի է մոռացաւ,
Գիտեմ որ նեան այժմ աստ է, այդ բանը ես գիտեմ լսւ:

Վլտածման մէջ ընկղմեցաւ Եաւարշ այս բան որ լրսեց,
Քիչ ժամանակ մընաց լրոած, և ոչինչ բան չըխօսեց,
Յետոյ ասաց՝ Հայրիկ՝ Խընդրեմ, ասա ինչ է այդ նետը.
Եւ ե՞րբ գլուաւ հրռաշալի այդ մեծ զէնը մեր Հայկը:

Օները ասաց՝ քեզ կըսպասերքըն դարպասում,
Ցոլակի զօրք ճապաղուել են Արարատեան լեռնոտում,
Վասն այն ես քեզ կարծ կուպատեմ, որչուշանաս դու այս տեղ,
Լաւ չէ որ ծելք վիշտ ունենան, դու ինքն-էլ ես հանճարեղ:

Ե Բ Գ Դ.

Երեք տարի էր՝ որ Հայկը Միջագետէն էր չուել, Երեք տարի՝ էր որ Եփրատ գետի ջուրէն չէր խըմել. Ճանապարհին տեղեակ էր նա, այն Ճանփով էր գընացած, Երբ որ մարդիկ առջի անգամ գաղթուեցան ի Մասեաց:

Եկաւ հիւսիս Միջագետէն, Հարք գաւառում բընակուեց, Որդւոց թուանց այն երկիրը ժառանգութիւն բաժանեց. Նորա բընիկ բընակիչքը՝ որ Սենաար ըստնացին, իւրեանց կամաւ նուաճկեցան ներքոյ աջոյ այն քաջին:

Աէլը լըսեց ու բարկացաւ, առաջ սլատգամ ուզարկեց, Յետոյ ինքն մեծ բաղմութեամբ Հայկայ երկիրն արշաւեց. Հայկը այս մեծ զօրաց դիմաց՝ քաջ արութեամբ կանգնեցա, Միայն երեք հարիւր մարդով պատերազմ տալ կամեցաւ:

Ճելի զօրքը կանգնած էին որպէս անտառ մի մայրեաց, Օդի մէջը փայլում էին սոյրք նոցա սուր սուսերաց, Արծիւի պէս թուզում էին գըրօշակաց նշանքը, Մեղմիկ քամին ծածանում էր նոցա երկայն ծուէնքը:

Աղեղնաւորք կանգնած էին բարձրաւանդակ տեղումը, Պարսաւորքն-էլ շարվել էին նոցա հանդէալ բըլլումը, Սուսերաւորք, նիզակաւորք կան յանդիման Հսյկազանց, Ըսպասում են որ նրշան տան և հանդիսին միմեանց:

Այս միջոցին երևեցաւ Բէլ իւր զօրաց առաջին, Երկաթակուռ զըրտհ ունէր անդընելի իւր հագին. Գլւին դըրած սարաւարտը երկաթի թագ ձեացրած, Սա առաջին աշխարքի մէջ գլւին դըրեց թագ փառաց:

Արծոց վերայ երկաթագամ լանջապանակ սլղնձի, Բոլոր առջեն պահպանում էր սիրտն ու փորն ընդ լանջի, Ահեղասաստ բազուկները ծածկում էր հաստ վառապան, Բարձք ու ազդեցք պահպանում էր երկաթաշին ոտնաման:

Առու երկսայրի ունէր կախած իւր ձախ կողքի աղդերէն,
Որ ծածկած էր ձախու ձեռին վերայ բոնած ասպարէն
Աջ ձեռումը բոնած ունէր երկայն ու ծանր հաստ նիզակ,
Որոյ ծայրին փողփողում էր սարսափելի սուր սըլաք:

Քանի՝ որ բարձր բըլը վերայ ման էր գալիս սիդալով,
Ոտքի տակը սասանում էր երկրի հողը դողալով,
Ինքն նըման բարձր կաղնւոյ երևում էր մէջ զօրաց,
Զինուորք նորա առջև նըման էին մանրիկ Ճնճղկանց:

Գընում էր թէլ զօրաց առջև, ու ասում էր ծաղրելով,
Հայկ մեր դիմաց ահա կանգնած է իւր անթիւ զօրքերով
Չըվախենաք այն սինլիքոր հովիւներէն, իմքաջեր.
Հայկը այսպէս չէր յանդգնիր, եթէ ձեզ լաւ ճանաչէր:

Դուք այն զօրքն էք, որ միասին աշխատեցաք իմ հետը,
Հաստատեցիք դլսիս վերայ երկաթակուռ այս թաղը,
Ազատեցիք, մինչև երկինք բարձրացուցիք Սենապ,
Գաղանաց հետ պատերազմով մարտ ունեցաք անդադար:

Բարելական բարձր գահը հիմնարկեցիք ձեր ձեռքով,
Հիմունքը սինտ հաստատեցիք հսկայական ձեր զէնքով.
Միջագետաց ինձ կացուցիք միահեծան թաղաւոր,
Ո՞վէ կարող մանրամասն հաշուել ձեր դործ փառաւոր

Չեր զօրավարք և զօրասկետք իմ են ընտիր սիրելիք,
Ամենեքեան կալուածատեարք, ինչպէս են իմ ընտանիք.
Իմ հետ կապուած են աղգութեամբ արենակից, աղգական,
Եղբօր որդիք, կամ քեռորդիք և կամ փեսայք պատուական:

Բարելական երկրի վերայ նոքա են պետք տիրական,
Դուք նոցա միշտ նըպաստ, պաշտպան, ընկերակից, պահապան.
Ամենեքին դուք հաղորդ էք իմ գոհութեան և սիրոյ,
Ես ամենուդ ճանաչում եմ, դուք էք հաստիչ իմ սըրոյ:

Հայկն-էլ ձեզ սէս սիրելի էք, հաւատարիմ պաշտօնեաց,
Ամենայն տեղ պատրաստական և մըտերիմ քաջ ծառայ.
Կընոջ համար խրտընեցաւ և ապստամբ երեցաւ
Միահեծան իմ տէրութեան, և խոչընդակ կանգնեցաւ:

Հայց ես նըրա կընուածեմ անձնապատան խեռութիւն,
Մեղ հետ եկած է համարեա՝ բարիլոնեան զօրութիւն,
Ամեն մէկըդ քաջ ու արի, հսկայ հըզօր և անյաղթ,
Ինչ են կորող ձեղ դէմ դընել երեք հարիւր կընամարդ:

Չեր նետերէն արեգական լոյսը ցերեկ կըթաղչի,
Պարսաքարը ինչպէս մէկ վէմ՝ դաշտի մէջը կուկառչի.
Մերկ ու տկլոր այն հովինքը պիտի կանգնին ձեր դիմաց.
Անկարելի է այդ բանը, և հակառակ իմ կարծեաց:

Յետ կէս ժամու ամեներեան կըգլորուին վիրաւորք,
Խոց ու վէրքը նոցա վերայ շուտ կուլինին բիւրաւորք.
Մեռածները գաղանք կ'ուտեն, գերի կըլին կենդանիք,
Մեր ոչխարաց հովինք կ'անենք. այլ դործի չեն պիտանիք:

Հիւսիսայնոց կանայք, աղջկունք ըսպիտակ են քան զմեր,
Եւ մեղ կըլին հարճ ու նաժիշտ և աղախին ինքնանուէր.
Նոցանէ շատ պիտի տանինք Միջադետաց աշխարհքը.
Յարկ կանանւոյ թող բընակուին այս լեռներու չքնաղքը:

Խաշինք, անդեսայք-էլ շատ ունին. Հայկը հետը շատ բերեց,
Մեղ բաւական կերակուր է, նա-էլ մեղմէն վաստըկեց,
Այլ ճոխութիւն չի գտնուիր, միայն հօտեր ու գերիք,
Պիտի միայն այն կողոսկտենք, և ասենք թէ՝ է հերիք:

Հայց երկիրը չեմ լըքաներ, կըբաժանեմ իմ զօրաց,
Ովկ կամենայ՝ այս տեղ կենաց, պիտի թողնեմ իւր կամաց.
Այդիք, սարտէզք թող ըստանան, Հայ աղջըկերք կին առնեն,
Պարարտարօտ դաշտաց մէջը նախիրք և հօտ դարմանեն:

Այս երկիրը լայն ու մեծ է, մէջն-էլ մարդիկ բաւական,
Լաւ լաւ քաղաք կարեն շինել, թէ բընակուիլ կամենան.
Հայկայ նախկին դաստակերտը մայրաքաղաք թող անեն,
Որ մերձ լինին բարիլոնին, շատ չքոկուին մեր երկրէն:

Օդն-էլ այստեղ բարեխառն է, բընակութեան յարմար է,
Երկրագործն-էլ, խաշնարածն-էլ այստեղ կենալ միշտ կարէ.
Մենք-էլ ամառն կարող ենք դալ ըզքօսանաց պատճառով,
Երինք այս տեղ են սառնասլատ՝ դըլուխ ծածկած են ձիւնով:

Անձ երեւամ է իմ Հայրը երկնքիցը վայր իջած,
Չեռին ունի պարզեները, որ ձեզ Համար պատրաստած.
Աւար, կասլուտ, և կողոպուտ՝ ձեր բերկութիւն ապառնի,
Գերիք, ստրուկը և արբանեակը, կալուածք և բաշխք դեղանի:

Ե՞կ, Հայր, իմ Քուշ, Ե՞կ զօրացուք այս իմ անթիւ բաղմոթի,
Եւ Հովանի լիցիս սոցա, և պահապան և պաշտպան.
Երկարատե այս Ճանապարհ ինձ ուղեկից լինելով,
Իմ աթոռը Հաստատում են իւրեանց անյաղթ ձեռներով:

Ե՞ւ դու, Քանան, Քամայ ծընունդ, Ե՞կ օդնութիւ մեր զօրաց,
Որ այս կըսվում արիանան, յաղթեն, վանեն թշնամեաց,
Լայնածաւալ այս գաւառաց լինին, ժառանդ և տիրող,
Քո պաշտօնին Հաւատարիմ և ջերմեռանդ և սիրող:

Ե՞ւ դու, անմահ Քամ՝ նախահայր նորողութեան աշխարհի,
Քո օդնութեամբ մեր այս զօրաց ամրապահեստ Հովանի.
Սոքա են իմ Հաստարանը այն օրուանէն ըսկըսած,
Երբ դէն առի աշխարհք սրբել վընասակար գաղանաց:

Պոսորդ էի դիւցաղնական և Հալածիչ արհաւրաց,
Աւրուականքն ըսկարէին կալ առաջի իմ բաղկաց.
Ճիւաղք, սովէղք, ձիամարդիք, վիշապք և օձք թեաւորք՝
Իմ ձեռքովը ոչընչացան որպէս ճրճիք թունաւորք:

Ես սրբեցի երկրի երեսն, մարդկան տուի փրկութիւն,
Վայրենի կեանքն մոռացուցի, և սովորեցրի մարդութիւն.
Քաղաքներու հիմքը դըրի, բընակիչքով լըքցըրի
Վարուցանքի հարկադրեցի և կալուածոց տէր արի:

«Քեզ պաշտօնեայ արի ամենք, որ քեզ միայն Ճանաչեն,
Քո պատկերին երկրսլագեն, դրօշեալը քո պաշտեն:
Այս պաշտօնէն Հայկը փախաւ, դու տուր նորան պատուհաս,
Որ մենք փառք տանք քո զօրութեան, որ մեղ այստեղ նպաստ Հաս:

ծամբայի և յուղաց՝ որ դա անհետանուած նկաք մաս վառիս զմբ Ա
Երամբաց դմբ և ըմառան դմբ մայնեարուալ արու զմաս ըմբ
ամառաց մայնեարուալ իմայ ու ամառաց դմբ յու խմես ըմբ թէ Ա
Երամբաց ամառաց ամառաց ամառաց ամառաց ամառաց ամբ ու ամբ
ԵՐԳ Ե.

ՍՄԻՆչՇԵՌ ԲԷԼ այս խօսում էր, Հայկն-էլ իւրեան քաջ զօրաց
Խըրախոյս էր տալիս բանիւ, և քաջալեր քաջարեաց;
Վըրէն ունէր մորթ առիւծու, ունք ու դըլուխ բաց էին,
Աղեղն կար թիկնէն կախած, կապարձ նետից ձախս ուսին:

“Եղնալէս իւր զօրք ամենքն-էլ մերկ, ծածկած մորթով գաղանաց,
Նետ ու աղեղն և պարսատիկ են զէնք ընդդէմ թշնամեաց.
Քիչ են թուով, երեք հարիւր, այլ ամենքըն քաջ, արի,
Որդիք, թոռունք են մերնախնոյն, թոռնեայք, յետնորդք դիւցազնի:

Ըսպասում են, որ ըսկըսուի մարտ ու կըսիւ մէջերը,
Որ կարենան մէկզմէկու ցոյց տալ իրանց ձեռները:
Միմեանցմէն շատ հեռու չեն, և իրերաց տեսնում են, ու զանազնում են ամեն մէկին և անուանքըն յիշում են:

Հայկը իւրեան յորդորանքը այս խօսքերով ըսկըսաւ.
Որդիք թոռունք և իմ թոռնեայք՝ դուք գնացէք նախագրաւ,
Բէլ այսքան բազմութիւնով՝ վախենում է յարձակիւ,
Դուք պիտի որ ճամփայ ցոյց տաք և սովորեցնէք մարտնչիւ:

“Ես զօրաց դուք ճանաչում էք, մէջերը նոր մարդ չըկոյ,
Սոքա էն հին որսորդներն են, և որսակիցք Ներըոդայ,
Թէ մէջերը քանիսն են քաջ, ձեզ ամենուն յայտնի է,
Մէկ-էլ պատմել այն կողմանէ, կարծումեմ որ պիտոյ չէ:

“Որսերու մէջ մենք-էլ կայինք, յայտնի է գործ ամենուն,
Մենք հարուստ ենք, նոքա աղքատ, ուր է նոցա քաջութիւն,
Ամեն մէկիդ ձեռքի տակը հաղարք կային սոցամէն,
Դուք գլխաւորք էիք նոցա, նոքա ըստոր ձեղիմէն:

“Ուրեմն դուք կարօտութիւն չունիք որ ձեզ յորդորեմ,
Զեր իմացածն բաւական է, և ես նոցա յօժար եմ.
Իմ խօսքը՝ ձեզ միայն այս է, որ երբ բացուի կըսիւը,
Մէկզմէկէ չըանջատովիք, այլ միշտ եկէք իմ հետը:

„Անք պիտի այն կողմ յարձակինք, ուր որ Ներսող է կանգնած,
ջոյց տանք նոցա՝ յաջողութիւն մեր մատանց և մեր բազկաց,
Մէկ անդամով կը վերջանայ, մեր կը լինի յաղթութիւն,
թէ որ կարնանք ընդդէմ կենալ, ջարդել նորա բազմութիւն:

„Եպա թէ ո՛չ լաւ է որ մենք մեռնինք այս տեղ քաջութեամբ,
Մեր ճոխութիւն և մեր կանայք՝ նըրան մընան գերութեամբ.
Մենք բաց աչքով չըտեսանենք մեր զաւակաց սուդերը,
Մահ թող ծածկէ իւր թեսերով մեր առաքաղդ աչքերը:

„Բայց չեմ կարծում, որ նա թոյլ տայ, որ մեզ յաղթէ թշնամին,
Որին համար մենք թողուցինք մեր բազմամեայ հայրենին,
Նա մեզ կ'օվնէ իւր աթոռէն, որ քան զարև շատ բարձրէ.
Կը զօրացնէ մեր ձեռքերը, որ ատելոյն սանձարկէ:

„Ա՞ թէ չենք մենք հնաղանդ բէլին մինչ նա չեր շատ չար,
Այս ամենայն անտեղութեանց ինքըն միայն է պատճառ.
Առաջ ուղաց իմ կընոջս յափշտակել իմ ձեռքէն,
Բայց ամօթով յաղթըլվեցաւ իմ քաջ թոռնէն կադմոսէն:

„Լուսընթագի դեղեցկութեան եղել էր սա սիրահար,
ինձ ամեն տեղ կամենում էր լինիլ բազմօք դլսահար.
Ես դեռ չեմ վըտարանջած, զգոյշ էի ինձ պահում,
Բայց վարագոյր սկատըռուակի պատառեցաւ մէկ պահում:

„Մէկ երեկոյ երբ Լուսընթագ յետ էր դառնում այգիէն,
Նաժիշտներով արբանեկօք որ կային իւր յետնէմէն,
Յանկարծ բէլը ծառաներով դարան նստած տեղիցը,
Յարձակեցաւ նորա վերայ և պինդ բռնեց ձեռիցը:

„Կադմոս որ միշտ կասկած ունէր թէ մէկ օր այս կու լինի,
Մօտ էր այն տեղ, որ իւր հանւոյն՝ վութով նպաստ հասանի.
Փայլակի պէս եկաւ հասաւ, ձեռին ունէր մէկ հաստ բիր.
Բէլի ուսին դրեց մէկ հարուած այն իւր բըրով բռնալիր:

„Բէլը գետին ընկաւ կործան, Լուսընթագը աղատվեց,
Կադմոս նըրան ողջ անվընաս մինչև իւր տուն հասցըրեց.
Չը կարաց բէլ վըրէժ խընդրել, կամ վընաս տալ կադմոսին,
Նըրան մահձում շատ արգելեց անտանելի ցաւ ուսին:

„ՅԵտոյ մէկ նոր բան հընարեց որ ինձ անէ յանցաւոր,
կամենում էր որ իմ ընկերք ինձմէն լինին վիրաւոր.
Քամայ արձան առնասլատկեր դըրօշեց ու կանգնեցոց,
Անուն դըրեց Քամոս աստուած, պաշտամունքը շատացուց:

„Ամենեքեան պաշտում էին անշունչ այս պիղծ արձանը,
Ես միայնակ իմ ընտանեօք չընկալայ այն պաշտօնը:
Թողի երկիր Բարելոնի, եկայ այս տեղ բընակվիլ,
Որ իմ կըրօն աստուածապաշտ չը կարենայ խախտըլիլ:

„Եյս տեղ ահա քեզ դիպեցայ իմ հօրեղբայր Ասքանազ,
Տեսայ որ քո աշխատութիւնք այս կողմերում չեն նուազ.
Դու ինձ կամաւ հնազանդվեցար, և կոչեցիր քեզ Հայկեան,
Եւ կազմում ես այս դունդ ահեղ իմ որդւոց հետ միարան:

„Ենթադրելոց տնտեսութիւնն ես իմ կամաց յանձնեցի,
Զօրաց քաջիկ գլխաւորի պաշտօնին քեզ կարգեցի,
Որդիք թոռունք ամենեքեան կալուածներու տէր դառան,
Հիւսիսային այս երկիրը անուանեցաւ Հայաստան:

„Վաղմոսին-էլ երախտագէտ լարձահատոյց ես եղէ,
իւր Փայլածու մականունով ամենայն տեղ յայտնի է,
Փայլակնաձև նա ցոլացաւ Բէլայ ընդդէմ դարանից,
Ածեց իւր տուն Լուսընթագին, և ազատեց ամօթից:

„Դուք մի ասէք թէ տկլոր ենք, իմ որդիք և իմ թոռունք.
Զըրահ ու զէնք շատ կու գտնենք, թէ մեղ մընան յաղթութիւնք,
Դուք մէկ այսօր արիացէք, վաղըն անդորր կըլնինք մենք,
Կամ կըմեռնինք արիութեամբ, կամ աւարաց տէր կլնենք:

„Տեսէք որքան սպառազէնք Բելայ ձեռքի տակը կան,
Թէ որ խոցվին մեր նետերէն, այն զըրահըն մեղ կումնան.
Ասքանազեան զօրաց գունդը կըզարդարվի պանծանդին,
Հսպառազէն զօրք կունենայ մեր երջանիկ հայրենին:

„Դուք չէք պաշտած առնասլատկեր պիղծ և զաղիր Քամոսայ.
Դուք չէք թողած ձեր Արարչին, չէք հաղորդված Ներողայ,
Չեր ճշմարիտ Տէր Աստուածը պաշտել էք դուք Չերմագին,
Քաջայոյս եմ՝ որ նա կուտայ ձեղ տըրիտուր պանծագին:

“Եւա որ ցածուց ջրհեղեղի բաղմալէկոծ յորձանքը,
Փակեց երկնից անձրևածին ամենածախս սահանքը,
Նոյին փրկեց լաստափայտով, արաւ երկրորդ նախահայր.
Մասիսէն մեղ առաջնորդեց, տարաւ Մինչև Սենաար:

”Անք այն տեղէլ չըմոռացանք նորա քաղցրիկ անունը,
Անձկութեանց մէջ կատարեցինք մեր կըրօնի պաշտօնը.
Ինչի՞ պիտի նա մեզ այժմ ձեռքէն թողնէ աննպաստ.
Եւ մեզ մատնէ թշուառութեանց անյագ ժանեաց չարաբաստ:

“Եյս օտար է նորա անհուն անհաս անչափ գըթութեանց.
Մենք ծառայ ենք, նա մեր Տէրն է, մեր Արարիչ, մեր Աստուած,
Մենք նըրան չենք բարկացուցած, նա-էլ մեզ չի կորցընիր,
Յաղթութիւնը մեզ կըմընայ, ես բընաւ չեմ երկմըտիր:

”Եթէ Բէլը մեզի յաղթէ, այս երկրումէլ չի մընար
Ո՛չ Ճշմարիտ Տեառըն պաշտօն, ո՛չ զոհ աղօթք հաշտարար,
Քամու կլնի ամենայն տեղ աստուած պաշտած զոհերով,
Նորա անշունչ առնապատկեր շուրջ կու պատվի գահերով:

”Հայց մեր Տէրը չի սնիր այդ, որ իւր անուն անարդվի,
Յաղթութիւնը նա մեզ կուտայ, որ իւր աջը ճանաչվի.
Երեք հարիւր այս քիչ մարդով նա մեծ գործեր կը կործէ,
Այս ոք նորա խորհուրդները իմանալու կարող չեն:

“աւատացէք իմ որդեակներ, որ թէ մահ գայ մեր առջև,
Մահուն հանդէպ ես կը վազեմ ինչպէս արծիւ սրբաթև,
Ես առաջին պիտի մեռնիմ, և դուք-էլ գայք յետեէս,
Դուք ոչինչէ մի վախենաք, քանի որ չեմ մեռած ես:

”Ահա Բէլը տեղին շարժեց, ըսկըսում է կըոփւր,
Զը թողնուք որ ձեզ պաշարէ, ու մտնի ձեր յետեր,
Եռ գընում եմ, դուք-էլ եկէք, բաց արէք իմ գըրօշակ
Ով շատ դարեր պիտի մընայ այս մէկ օրվան յիշատակ:

Ճանաչ իրազան այլով ճառաց պահա միջնի գլուխ
անառաջ ճանած թիւն նորով բայ և նոր մաս նոր ուն
ճանաչ անձի տիվան բայ այլուն սա պահա միջ այ
ճանարաւ դամակը ու մաս ճանապ պահան միջուր այլուն

ԵՐԳ 9.

Հնչեց փողը. թնդաց թմրուկ, ճայն բարձրացրին ղինուորքը,
Աղաղակէն դղրդեցան բարձրաւանդակ բրլուոքը.
Նետեր, քարեր անձրևի պէս ամեն կողմանց են թափվում,
Քաջք խիպախում դէմ թշնամեաց, վախկոտները են թաքչում:

Անտերու խիտ թանձրութենէն, ու քարերու թոչելից,
Արեգական լոյս փակվում էր, օդը մըթնում ղէնքերից,
Գոռում էին երկինք երկիր, աղաղակաւ կովողաց,
Դաշտն ու տափը ծածկը վեցան դիակներով խոցվողաց:

Խնչպէս հասուն թրժան ծառէն, երբ որ ծառը մէկ շարժես,
Ցընցըվելով կը թօթափին թոթեր գետնի ի յերես.
Այսպէս երկու կողմերէն-էլ վիրաւորքը թափվում են,
Գետնի վերայ, խրեանց արեամբ կանանչ արօտն ներկում են:

Խնչ տեսարան է երկում հսյեցողաց աչքերուն,
Ինչ ճապաղիք արիւններու, և աղքիւրներ են բղխում,
Կարկաջահոս վրտակի պէս հասնում մինչև ծովակը,
Կարմրեցնում են թանձրութեամբ պարզ ու վրձիտ ջրերը:

Վյս տեղ խոցված վիրաւորք մահու հետ է ողորում,
Նետը սըրտէն քաշում ձեռքով դողդողալով է հանում.
Այն տեղ միւսը իւր ընկերին աղաջում է ըսպանել,
Անտանելի տանջանքներէն մէկ հարուածով աղատել:

Միւս կողմը քաջը ընկած, կամաց տեղէն շարժում է,
Վէրքը ձեռքով շօշափելով, արեան բղխումն բռնում է,
Պատառում է իւր շապիկը, և վերքերն է պատառում.
Հանդարտ տեղէն վեր կենալով դէսկի դաշտն է հեռանում:

Այլ նորա վերք մահարեր են, չէ հասանում վրկութեան,
Կամաց մութը մօտ է գալիս՝ ծածկում թևով չար մահուան,
Նա փակում է իւր աչքերը, յաւեժական քոն մըտնում,
Վերջին անգամ բարեաւ մընա՝ իւր սիրելոյն առարում:

ԱՅԿԻ փորին նետը ցցուած՝ երկու ձեռքով բռնել է,
Այս կողմ այն կողմ է վաղվզգում՝ որ մէկ ծանօթ գըտանէ.
Ու այն նետը տայ հանելու, բայց ցանկութեան չըհասած,
Ընկաւ գետին արեամբ քամված, շունչն ու կեանքը ըսպառված:

ԱԿԽԱՐ աղեղն սաստիկ լարեց, նետը թըռուց նըշանով,
Նետի տեղը այլ նետ եկաւ, սըրտին կըսպաւ իւր թափով.
Գետին ընկաւ դողդողալով, և չը կարաց ձայն հանել,
Աչքը փակեց մահու ըստուեր, էլ լոյս չելաւ տեսանել;

ԱՅՍ դառնութեան տեսարանը Բէլայ աչքի առաջին,
Սասանեցոյց նորա սիրտը, սոսկաց անձը ու հոգին,
Ափսոսում էր որ այն բլրէն, ուր որ առաջ կանգնած էր,
Առանց կարիք՝ բշտապելով թշնամոյն մօտ եկել էր:

ԱԿԱՄԵՆՈՒՄ էր միւսանգամ դէստ այն բըլուր հեռանալ,
Ու այն տեղը մէկ հընարքով ինչպէս պէտք է ամրանալ,
Որ երբ բոլոր զօրքը մէկ տեղ համագումար ժողովվին,
Միւս անգամ ճակատամարտ գոռ յարդարէ դէմ Հայկին:

ԱԿԻՆ դեռ Ներըող այս էր խորհում, երեւեցաւ նոր նըշան,
Երկնքումը հանդէալ Հայկայ պայծառացաւ ծիածան.
Կարմիր կանանչ գօտուոյ նըման ելուսակիղն փայլումով,
Աղեղնաձև բոլորվել էր, ցոլանում էր բոցերով:

ԱՅՍ լուսանիշ կամարի մեջ մէկ զուարթուն էր կանգնած,
Լուսատեսիլ ամպիկներով չորս կողմիցը շուրջ պատած,
Սաւառնաթե սըլանում էր մօտենում էր դէստ այն տեղ,
Ուր որ Հայկը մարտի մէջը հանդիսացած էր զօրեղ:

Փայլակնացայտ պատգամաւորն երկնից եկած այն դեսպան,
Եկաւ կանգնեց զուարթերես մեր Նախահօր յանդիման.
Ասաց՝ ողջոյն քեզ՝ մըտերիմ ծառայ բնաւից Արարչին,
Քեզ տըրիտուր եմ ես բերել, որ կայ այժմ իմ ձեռին:

Քո հաստատոն սուրբ հաւատոյն, անշարժ յուսոյ փոխարէն,
Երկնից երկրի ըստեղծողը իւր գերամբարձ աթոռէն,
Առաքում է քեզ օգնութիւն սրովքէական այս Նետը,
Ինքն-էլ յաւէժ պիտի լինի անբացակայ քո հետը:

Երբ Ներողը դէմ Արարչին ուղեց կանգնել աշտարակ,
Որ երկնառաք պատժոց լինի այն դիմամարտ ամբարտակ,
Դու առաջին ձայն հանեցիր, թէ Արարչին չէ հաճոց,
Այն քո ձայնը խընկոց նըման անոյշ բուրեց Աստուծոյ:

Սաաց. այս ձայն մընայ անխախտ, թող այլք խօսին դանազան,
Փըչեց հողմը խառնակութեան, լեզուները փոխվեցան.
Դու պահեցիր այն բարբառը, որով Նոյ էր օրհնըված.
Աճել, շատնալ, երկիր լընուլ, լինել երկրորդ հայր աղդաց:

Քեզ Նոյի պէս սիրեց Տէրը, սկիտի լինիս նահապետ,
Ժառանգ լինիս մեծ օրհնութեան ինչպէս նախնին քո Յարէթ,
Քո որդոցմէն կրազմանան անթիւ անհուն յետնորդներ,
Քո բարբառը կրպահպանէ աստուածաւանդ սուրբ մըթեր:

Թէսլէտ կ'ընին այնպէս օրեր՝ որ այդ լեզուն կընեղվի.
Աստուածընդդէմ քրմաց պարը կ'ընի գըտիչ այլ լեզուի,
Բայց այն լեզուն աղդ յետադայ կը անարդէ, կ'անգոսնէ,
Ու ծաղրելով այն բարբառը Տուրուբերան կ'անուանէ:

Իսայց քո լեզուի պայծառութեան անշարժ հիմը և արմատ,
Պիտի դընեն Հիւսիսումը քո որդիքըն հարազատ,
Լոյս պիտի տան քո դաւակաց, քրմաց խաւարն փարատեն,
Աղդին նոր փայլ պայծառութեան իմաստութեամբ ընձեռեն:

Տիրահաճոյ քո բարբառոյ համար այս էր հրաման,
ԴՈՐՈՎ իմ փառք, դաւանութիւն, սուրբ շրթունքէն բղխեցան,
Ինչի՞ պիտի յաղթահարվի անխելք քրմաց կարկաչմամբ,
Թող խարերայք վայրախօսեն, Հայկ կը պանծայ յաղթութեամբ:

Այն ապագայ յաղթութեանը այսօր պիտի տամ նըշան,
Լարեալ աղեղն ահասարսուռ լինի բելայ յաղթական.
Նորա լեզուն տիրանարգու՝ մահ թող այսօր կաշկանդէ,
Աշտարակի դառն պտղոց այն չար ծառը հատանէ:

Այսօր վերջին կենաց բելայ մըթին հասել է օրը,
Կը ցամաքի աշխարհաւեր և թունարբու աղթիւրը.
Նոր կըբղխէ Մասեաց լեռնէն ջուր յորդառատ կամ վըտակ,
Այն հաստատուն սարը կ'ընի պարծանաց վեհ յիշատակ:

Աշտարակը շինեց Ներող, որ մարդիկ ինձ մօտենան,
ինձ աթոռէս սասանեցնեն, և իմ վրրէս բռնանան,
Ես այն գետին կործանեցի. Էլ չի շինուիր աշտարակ,
Էլ չի լինիր անզգամին եղեռութիւնն օժանդակ:

Բայց նորա տեղ տուի Հայկին այս երկնարերձ Մասիսը,
Որն որ շրքեղ պատկերացնում է իւր անյաղթ դըրօշը,
Սորա չքնաղ երեսոյթքը իւր յետնորդաց լոյս կուտան,
Հիւսիսափայլ պայծառութեամբ Մասեաց մանկունք կու խսցուան:

Քո քաղցրանոյշ թեթև լըծոյ զօրավիզ է այս նետը,
Որ իմ ձեռամբ քեղ առաքեց իմ, քո, բնաւից Հաստիչը,
Քանի որ այս կայ անկորուստ՝ անշարժ կ'լի քո երկիր,
Այլ երբ որ այս երթայ կորուստ, այն ժամանակ վախեցիր:

Այս նետը չէ մարդկեղէն շէնք՝ մահկանացու ճարտարաց,
Սերովեէից է գործ ձեռաց և երկնքում յօրինած,
Կայծակներով ջրած մըխած, անդամանդեայ սալումը,
Շանթիկներու կըսակներով ու մշտակէղ բոցումը:

Աներեսոյթ զօրաց վըտառք են դուգընթաց այս նետի,
Քո որդիքը այս զօրութեամբ ժառանգ կ'լին քո գահի,
Ոչ թշնամիք կը զօրանան քո երկրումըն և ոչ հէն,
Քանի որ այս քո տոհմի մէջ լինի լնդդէմ նոցա զէն:

Աս և սրտի սառնութիւնը կը հալեցնէ, կուտայ սէր,
Ամբարտաւան օրիորդը կու հարսնանայ անձնանուէր,
Անբութելի ցաւոց դեղ է, առողջութեան ընձեռիչ,
Դիմամարտից է հալածիչ, ամուր բերդից կործանիչ:

Առ դու այժմ նետը ձեռէս՝ թելի սրտին թափանցէ,
Թողնա իւր հայր քուշին ձայն տայ, ու քամոսին թող կանչէ,
Գեղ չէ պիտոյ մարդկան նրապաստ, քեղ միշտ Նա է օգնական,
Որում քամոս էր ատելի, զզուանք քուշը և քանան:

ԵՐԳ Է.

Օդապարիկ զուարթունը իւր բոլորչի աղեղով,
Կամաց կամաց հեռանում էր դէսլ ի երկինք սուրալով,
Անոյշ բուրումն մընաց տեղը, ինչպէս է հոտ կնդրկի.
Բայց ծուխ չըկար, միայն լոյս էր, կանանչ, կարմիր, ծիրանի :

Այս գեղափայլ լուսէն մընաց մէկ շառաւիլ դէսլ ի վեր,
Ուր երկնառաք այն զուարթուն գարշապարը իւր կ'ուղղէր.
Լուսացնցուղ ծիր հրաշալի՝ անսիւն, անկայմ, անկամար,
Գետնէն մինչև լոյս ամպերը ճամբու նըման շինած կար :

Օ ըմայլել էր մեր նախահայր այս գեղազան տեսիլքով,
Ականատես էր զուարթնոյն զաւակներով, թոռներով,
Բայց և Ներբոդ իւր զօրքերով յայտնի տեսաւ այս բանը,
Այլ չիմացաւ թէ ի՞նչ արդեօք է այս անլուր նըշանը :

Վ իրգեր, քարեր և նետերը, որ ծածկում են սլարդ օդը,
Զը կարացին այն զուարթնոյ արդելում տալ թըռիչքը .
Ինչպէս վերէն գալու միջոց, նոյնպէս և յետ դառնալիս,
Ամենայն զէնք օդոց մէջը նըրան ճանփայ են տալիս :

Այլ լուսափայլ ճանապարհը, որով եկաւ ու գընաց,
Այն բիւրաւոր քարերու մէջ հաստատվեցաւ ու մընաց.
Մինչև չքնաղ զուարթունը ամպերու մէջ ծածկեցաւ,
Յետոյ փայլուն այն ճամբան-էլ նոցա աչքէն թաք կեցաւ :

Հայկը դարձաւ դէսլ իւր որդոց ու ըսկըսաւ խօսելու.
Տեսաք ո՛րքան պարտական ենք մեր Արարչին փառք տալու.
Նա մեր փոքրիկ զոհին հաճել՝ պատարագն է ընդունել,
Մեր փոխարէն դէմ թշնամեաց մարտնչելու է եկել :

Չը մոռանանք մենք այս շընորհ, յետնորդք յետնոց պատուէր տան,
Ուր նոքա միշտ հաստատ պահեն արարչաւանդ պատուիրան.
Քաղցր է այս լուծ, լուծ փոքրոդի, ուրախութեամբ թող կըրեն,
Եւ տըրիտուր բազմապատիկ նըրամէն թող ըսպասեն:

Այժմ, որդիք, դուք նետերը կապարձներում պահեցէք,
զեր հաստ ու պինդ բիր ու բակուղ ձեռներումը բռնեցէք.
Ես միմիայն լարեմ այս նետ, Ներողի դէմ թոցընեմ,
Պատրաստ կեցէք որ յարձակիք ձեր բիրերով նոցա դէմ:

Այս որ ասաց՝ մէկ քանի ոտք առաջ գընաց դիւցազնը,
Երեքթևեան նետը դըրեց, փոքր ինչ լարեց աղեղնը,
Այն ծիածան կանանց կարմիր և ծիրանի գոյներով,
Որ զուարթնոյն չորս կողմը կար, երևեցաւ նոր ձևով:

Լարած աղեղն շրջապատեց կամարաձև մէկ գօտի,
Լոյս էր բղխում այն ծիր բոլոր գծեալ առանց կարակնի.
Նետն ու աղեղն խաչածեն, պատած հաղար աչքերով,
Աչքըն փայլում են լի լուսով, ցոլանում են բոցերով:

Տարածվում են այն լուսափայլ կանանց կարմիր գոյները,
Բակի նըման էր բոլորված, միջակէտում կար Հայկը,
Անոյշ բուրմամբ ըզմայլելով նոր ոյժ ըզգաց իւր ձեռին,
Քաշեց լարը դէպ իւր սիրտը, ծալվեց թամբը աղեղին:

Երբ փոխվեցաւ խաչի ձեր, նետի թեքը փայլեցան,
Երեք պայծառ շանթից նըման հըրոյ բոցեր ցոլացան,
Հայկայ մատունք լուսաթաթախ նետը լարէն թըռցրին,
Լարը ճայթմամբ դարձաւ տեղը, կըպաւ իլի՛ աղեղին:

Կետը թըռաւ, օդը պատռեց, բայց յետնեմէն մընաց ծիր,
Նըման ճամբու այն զուարթնոյն ձըգված յերկնից դէպ յերկիր,
Բայց այս ծըրի ծայրը կըսլած էր լայնալի՛ աղեղին,
Միւս ծայրը նըման տըտան՝ կապուած յետուստ այն նետին:

Լարի նըման երկայնացած, ո՛չ հուր, ո՛չ լոյս, ո՛չ ամպ էր,
Միայն նետի ճամբան պայծառ շառաւիղով փայլում էր,
Հասաւ նետը Բէլի կուրծքին, ծակեց լանջաց տախտակը,
Եւ թիկունքէն դուրս թափանցեց զարհուրելի սըլաքը:

Առաջ արխւն սև ժայթքեցուց վիրաբերան խոցուածին,
Յետոյ մահը ներս սըպըրդեց պատառուածով հարուածին,
Մըթաղնեցան աչք Ներողայ, լոյսը քաղվեց բիրերէն,
Ուժը թողեց նըրան անտէր, ու հեռացաւ ոտքերէն:

Ինչպէս հըզօր փայտակոտոր որ տապարը ձեռումը,
Յաւեժական սօսեաց մէջը փայտ է պտրում մէրումը,
Տեսաւ մէկ ծառ, որոյ գըլուխ բարձրացել է դէպի ամսի,
իւր տապարով հաստ արմատոյն հարկանում է սաստկութեամբ.

Հազար հարուած ոչ են կարող այն մեծ ծառը կործանել,
Միայն փայտը կամաց կամաց ըսկըսում է ըսպառել.
Հաստ արմատը քիչ քիչ կողքէն կըճեալ կըճեալ կըտրելով,
Բարակում է և մընում է, որ ընկնի մէկ հարուածով.

Երբ որ այն մէկ հարուածըն-էլ հասանում է փայտատէն,
Ծառը յանկարծ սասանելով բաժանվում է արմատէն,
Գրլորվում է ծառոց վերայ, ու ծառերը ճըմլելով,
Կործանվում է դէպի ի գետին լայն ու երկայն ծածկելով:

Այս մեծ ծառի նըման էր բէլ, որ արմատէն կըտրված,
Ընկաւ գետին դիաթաւալ, անշունչ խոր խոցուած.
Երկիր թնդաց նորա անկմամբ, զօղանջեցին զըրահքը,
Դրդորդեցան օդն ու ամսը, շառաչեցին իւր դէնքը:

Հայկը տեսաւ նորա անկումն. ձեռքը ձըզեց դէպի ի նա,
Լեզուն անշարժ կար բերնումը, չը գիտէր թէ ուր դառնայ,
Դէպի թշնամի՞ն վաղէ արդեօք, հանէ սըրտէն իւր նետը,
Թէ ծունկ չորի, գոհութիւն տայ՝ ձեռներն ի վեր երկինքը:

Իէլի զօրքը երբ որ տեսան, թէ իւրեանց քաջ զօրավար,
իւր մեծ մարմնով ծածկեց գետին բաւական մէկ օրավար,
Զէնք ու սուրը դէն գձելով՝ ըսկըսեցին փախչելու,
Ու ոտքերէն իւրեանց գլաոյն աղատութիւն խնդրելու:

Հայկայ որդիք բիրը ձեռին յետևներէն վաղեցան,
Ասորիքը վախենալով՝ փախչելէն յետ կասեցան,
Եկան ընկան Հայկայ ոտքը և խոստացան նուաճվիլ,
Հայկը նըրանց իւր երկրումը տուեց կալուած բնակվիլ:

Հայկը հանեց բէլի սըրտէն այն երկնառաք իւր նետը,
Ցուցուց թոռանց և թոռնեկաց և մանաւանդ որդւոցը,
Ասաց. Տեսէք մի՛ մոռանաք, թէ ի՞նչ խօսեց զուարթուն,
Թէ ի՞նչ շընորհ կայ սըրա մէջ, և ի՞նչ է իւր զօրութիւն:

Դուք այս օրը միշտ պահեցէք ձեր մըտքումը անմռաց, Որ դուք այսօր փըրկըլեցաք Բարելացւոց ի ձեռաց . Բէլ իւր մահուամբ ձեզ շընորհեց աղատութիւն և նոր կեանք, Նորա ընկած մեռած տեղը պիտի կոչվի «Գերեզմանք»:

Չօդնեց նըրան զէնք ու զըրահ, մեղչընեղեց մերկութիւն,
Մելի վերուստ հասաւ ահա անակնկալ օդնութիւն.
Նորա հաղարք և բիւրաւորք մէկ հարուածով ցըուեցան,
Մեր քաջարի երեք հարիւրք ձոխ աւարով լցուեցան:

«Եա մեր երկիրն էր բաժանում, մեր երկրումը սպանվեց,
Մեր աւարով էր պարծենում՝ իւր աւարն-էլ մեղ թողեց,
Քամովս նախնին չէ գտնելու մեր երկրումը պաշտողներ.
Մեր սպաշտօնը նոյն կըմնայ, ինչպէս առաջ մաքուր էր:

Տեսան, Շաւարշ, Հայկի նետը, թէ ի՞նչ զօրեղ զէնք է նա,
Այս նետը քեզ այսօր որբուկ Արմիկ դշխոյն պիտի տայ.
Երջանիկ ես, քաջ նահապետ, երկու բաղդ է քեզ պահած,
Հայաստանի գահըն հըզօր, և սիրտ կուսին բորբոքված:

Գընա, Շաւարշ, դարձիր քաղաք, ծերքըն քեզ են ըսպասում,
Մի՛ ընդերկար հակառակիր, լուր՝ ինչ ծերքըն են քեզ ասում.
Բըոնութեան սէգ ու ամեհի պիտի փշոես եղջիւրը,
Ցամաքեցնես աղդի մէջի խըսովութեան աղքիւրը :

Շաւարշ՝ ըքնաղ է անունըդ, պիտի լինիս երկրորդ Հայկ,
Քեզմով պիտի Հայաստանի երջանկութեան բացվի այդ.
Քո հայրենիք սուդ է անում իւր Զարմայրի յետևէն,
Պիտի սըրբես յորդ արտասուք քո համազդեաց աչքերէն:

Այսօր աղդը քեզ Նահապետ պիտի կոչէ ցնծալով,
Արմիկ դշխոյն քեզ իւր փեսայ կը անուանէ պանծալով.
Քո համեստ վարք, քո պարկեշտ կեանք արժանի են այս վարձուն,
Գընա յուսով. ըսպասում է քեզ միշտ կենաց քաղցրութիւն:

Ե Բ Գ Լ

Օ արմայրի կինն իւր դըստեր հետ նստած էին միասին,
Մինչ դեռ ծերքըն Շաւարշի հետ խօսում էին յատենին,
Վերնայարկի դստիկոնի պատուհանէն դէպ ի վայր,
Արմիկ դշխոյ տեսանելով քաջ Շաւարշին՝ զուարձանայր:

Քաղցր էր նորա քնքոյշ հոգւոյն լըսել իւր հօր դովեստը,
Կարծում էր թէ՝ Զարմայրին կեանք պիտի տայ այն համեստը,
Զմայլում էր նորա խօսքին, ձայնըն ախորժ էր լըսում,
Նորա չքնաղ կերպարանէն չէր իւր հոգին կշտանում:

Թուլի՝ գիտէր՝ թէ նա է իւր ընտրած պատրաստ փեսացուն,
Կպրծում էր թէ հարսնախօս է այն ծերերու բազմութիւն,
Թէպէտ նոքա չէին ասում Շաւարշին ինչ իւր համար,
Բայց նա մըտքով չիմանալով՝ այն էր սերտում անդադար:

Այնքան անթիւ երիտասարդք նըրան առաջ ուղել են,
Մէկի համար չէ ըզդացել միջնորդութիւն սրտէմէն.
Սորա համար կուսական սիրտն համարեա թէ տրվում է,
Եւ անմըռունչ հասկացնում է թէ սա, սա քո փեսան է:

Ո՞ւ, ի՞նչ զարմանք ըզդացմունք է, երբ որ մէկի մըտքումը
Ըսկըսում է մէկի համար բարեխօսել իւր սիրտը.
Տըգեղն իսկոյն երեւում է չընաշխարհիկ մէկ սիրուն,
Յիմարն աչքին ձևանում է զգօն, գիտուն, իմաստուն:

Ապա Շաւարշ չքնաղ տեսլեամբ, ըզդաստ, խելօք, հանձարեղ,
Ճոխ, փառացի, վըսեմ, շըքեղ, անպարտելի և դօրեղ,
Այն աղջըկայ հոգւոյ մէջը ի՞նչ էր արդեօք երեւում,
Եւ օրիորդն հըրաշագեղ ի՞նչ էր սըրտում մըտածում:

Ինձ մէկ օր պէտք է հարսնանալ, փեսայ ընտրել ինձ համար,
Արքայորդին Միջաղետաց չէ լինելու ինձ խօսնայր.
Թէ Հայաստան հարսնանամ ես՝ ում պիտի ես կին դառնամ,
Մէկ Հայկաղուն պատանեկի, ումը որ ես սիրտը տամ:

Այս Ցոլակին չըկամեցայ, մայրը թողեց իմ կամքին,
Ենթերն էլ չեն ուզում, որ նա լինի ժառանգ իմ ծնողին.
Այլ Շաւարշը սիրելի է աղջին, Համայն ծերերուն,
Սիրտը ինձ միշտ ասում է թէ՝ նա է արժան քո սիրոյն:

Դանաչում եմ ես Շաւարշին, Հայրս-էլ նըրան սիրում էր,
Նա տաս տարով մեծ է ինձմէն, միշտ դարպասը մըտնում էր,
Մականախաղ Հանդիսի մէջ ո՞վ էր նորա ախոյեան,
Միշտ յաղթող էր մենամարտում, որսոց կամ յայլ արշաւան:

Ինչպէս էր նա մանկութեան մէջ, նոյն է և այժմ պատանին,
Կարմիր ձերմակ իւր երեսով նըրման գարնան է վարդին,
Մատաղատունկ նոճ է հասակն, չըքնաղ իրանն և շրքեղ,
Դեռ Հայրս էր նըրան գովում, և ասում էր Հանձարեղ.

Զէ! սիրտը ինձ վըկայում է, որ այսուհետ չեմ կարող.
Կինել ինչպէս առաջ էի՝ փեսաներու ծաղը անող.
Երեսի թէ ես-էլ պիտի հընաղանդվիմ իմ բաղդին,
Կուսական կեանքս ձեռքէս թողում, փեսայ կոչեմ Շաւարշին:

Օ արմանք եղաւ, ի՞նչի երեկ մէկ բան չըկար սրտումը,
Այսօր Շաւարշ դիւցաղնի պէս երեւեցաւ աչքումը,
Միգուցէ թէ անփորձ սիրտը եղաւ նըրան սիրահար,
Մինչև այսօր սէրը ի՞նչ էր. սէրը չըկար ինձ համար:

Բայց ի՞նչ անեմ, առանց սիրոյ, կեանքը գիտեմ որ կեանք չէ,
Հասկանում եմ որ իմ հոգւոյ մէկ լաւ մասը հետը չէ.
Այն լաւ մասը գըտնվում է Շաւարշի մէջ, ի՞նչ անեմ,
Երբ որ գառնամ Շաւարշի հարս՝ հոգւոյս կէսն-էլ կըդտնեմ:

Եոր իմացայ թէ՝ ի՞նչ բան է կուսի համար սիրելը,
Մարդ իւր հոգւոյ կէսն է պըտում, որ կարկըտնէ իւր սիրտը,
Պատառուած է սիրտ Արմիկի, կէսն է միայն իւր մէջին,
Կէսն-էլ Շաւարշ է գըրաւել, ու պահել է իւր ձեռին:

Վես, Ե՞րբ Շաւարշ յափշտակեց իմ կուսական խորհուրդը,
ի՞նչ որ երեկ և մէկէլ օր արծարծում էր իմ սիրտը,
Այսօր նոքա իմ սըրտումը բընաւին չեն երեսում,
Հոգւոյս մաքուր հայելումը սոսկ Շաւարշին եմ տեսնում:

Կաւարշ-իսօ ինձ չէ ճանաչում, ի՞նչ պատճառաւ եմ կարծում,
թէ նա-էլ ինձ համար միայն է այս միջոց մըտածում,
կարելի է, որ նորա սիրու այլ գեղեցկի է տուած,
Սև աչքունքով մէկ օրիորդ նորա հոգւոյն տիրացած:

Դարձաւ դէպ մայրնու հարցըրուց «Մայրիկ, Շաւարշունի կին»:
Բամբիշն ասաց. Քեզ ի՞նչ փոյթ է հարցանել վասն Շաւարշին.
Գուցէ աչքիդ լաւ երևաւ, կուզես նըրան հարսնանալ,
Շաւարշը դեռ ամուրի է, եթէ կամիս իմանալ:

Ի՞նյոց մկարծում թէ նա մտքում չունենայ հարս պատրաստած,
Եւ իւր սիրու մաքուր սիրոյ նետէն լինի պահպանած.
Պատանի է Ճոխ ու շքեղ, եթէ ինքը չէ խընդրել,
Օրիորդքը իրանք նըրան կ'լին անշուշտ սլըտոտել:

«Քո հօրը դեռ չէի տեսել, որ սըրտումըս սէր տուի,
Զարմայր-էլ մէկ Շաւարշի պէս էր սէգ ըլքնաղ սլատանի.
Շատ օրիորդք իրանց մտքում փեսայ էին անուանում,
Բայց ես երբէք նըրան ինձմէն օտար չէի համարում:

Դեռ նոր նստել էր Արամեանց այս գերադահ աթոռին,
Մէկ օր եկաւ այցելութիւն մեր հայրենի գաւառին.
Ես որ տեսայ, ասի՛ Ահա իմ հանդերձեալ փեսացուն,
Ես պիտի հարսն դառնամ սըրան, այս է իմ արդ ցանկութիւն:

Ակնց այն օր նըշանածի անուն լըսել չուղէի,
Շատ պատանիք դատարկ դարձան մեր դարպասէն հայրենի,
իմ ծընողը Առնակ՝ տիրող Գուգարացոց լայն ծագաց,
ինձ համար շատ էր մտածում թէ՝ Նըշեկը տանը մնաց:

Ես մըտքումըս ասում էի. Հայր իմ, դու մի՛ շատ հոգար,
իմ փեսան դեռ չէ՛ երևում, բայց շուտ կուդայ ինձ համար,
Ես սինըքոր պատանեկաց բընաւ չուզեմ լինել կին,
Դեռ ես չէ՛ ինձ դղուեցրել անոյշ հացը իմ ծնողին:

Մէկ օր յանկարծ լսվեցաւ թէ՝ քաջ նահապետ Զարմայրը
Մեծահանդէս որսի համար եկել է մեր կողմերը.
Ես մըտքումըս ասացի թէ՝ Այն որսիկը ես ինքս եմ,
Ահա փեսաս ինքը եկաւ, ինչի՞ համար մըտածեմ :

Հայրըս գընաց շուտ ընդ առաջ վեհասլանձ այն որսորդին,
իսկոյն նըրա բաղմութիւնը ճապաղեցաւ մեր դաւթին:
Ես վերնայարկ պատուհանէն տեսայ շրքեղ պատանւոյն,
Սիրտըս կապուեց իւր սըրտի հետ, հոգիս գերի էր հոգւոյն:

Ի՞սկ կուսական սէգութիւնըս ես բընաւ ցած չողըրի,
Զըկամեցայ որ նա կարծէ թէ՝ խընդրակ եմ փեսայի.
Մինչև ի ճաշ չերևեցայ, մընացի իմ սենեկում,
Նոքա իրանց որսորդութեան բաներն էին դեռ խօսում:

Երբ որ ճաշը պատրաստվեցաւ՝ ամենեքեան բաղմեցան,
Միմիայն ես էի պակաս, եկած չէի այն սեղան.
Հարցուց Զարմայր. Ինչի՞ համար այս մէկ տեղը դատարկ է:
Հայրըս ասաց. Դուստրըս սեղան, երևի թէ, եկած չէ:

Զարմայր հարցուց. Մի՞թէ օտար եմ ես, Առնակ, քո տանէն,
Որ քո միակ չքնաղ դուստրն թաքցընում ես իմ աչքէն:
Յետոյ նայեց մօրս երեսին, և ժպիտով ասաց նա.
Թուի թէ դուստրդ գեղեցիկ է, ինչպէս քնքոյշ մայր նորա:

Հայրըս ասաց. Իմ բարին է, ես չեմ կարող դովելու,
Ահա ինքն կուգայ սեղան, դու կարող ես վճռելու:
Իմ յետնէն նաժիշտ եկաւ, իսկոյն եկայ ես սեղան.
Ամենեքեան խօսում էին. յանկարծ ամենք սուս եղան:

Ես սիդաճեմ մըտայ դահլիճ, ողջոյն տուի Զարմայրին,
Եւ իմ մօրըս մօտը նստայ, նոյն սէգ ձևով սկանծագին.
Զարմայր ապուշ էր մընացել, հաց չէր գընում բերանը,
Համարեալ թէ քաղցած մընաց, ունայն անցաւ և ճաշը:

Լեղուն քիմքին միացել էր, ո՛չ ուտում էր, ո՛չ խըմում,
Ո՛չ պատասխան էր նա տալիս, և ո՛չ մէկի հետ խօսում.
Ես ինձ համար լաւ կշտացայ, յետոյ ասի ժպտալով,
Հըզօր՝ քաղցած մընացիր դու, այս կողմ այն կողմ նայելով:

ԵՐԳ թ.

ԱՌԵ, ԱՌՄԻԿ ջան, ի՞նչ ժամ էր այն, որ նահապետ Զարմայրը
իմ խօսքին ետ պատասխանի, ու զարմացուց իմ հօրը.
Բայց արդ չըկայ իմ Զարմայրը, եօթն ամիս է մեռածը,
Խլիոնում թողեց նըրան՝ Աքիլլէսի հարուածը:

ԽԴայ լերին հովիտումը մահու հետ էր ոգորում,
Վերջին ողջոյն իւր սիրելեաց՝ իւր նըժուդին էր յանձնում.
Նորա թաղման բաղմաթախիծ և սըդալի հանդէսը
Միջակըտուր արաւ Յունաց արիւնացեղց կըրկէսը:

Տըրոյիացիք Յունաց հետը անդ կանգնեցին մահարձան,
Ուր Զարմայրի դիակն անկաւ. այն տեղ է իւր դամբարան:
Արտասուելով Աքիլլէսը, Տելամոնեան Այաքսը,
Հեկտորի մօտ հողը դըրին նորա փոշւոյ սափորը:

ԱՌՄԻԿ՝ չունի՞ս դու այժմ հայր, դու որբուկ ես, ես՝ այրի,
Պիտի ցած գամ ես այս տախտէն, աւաղ քեղ՝ կի՞ն Զարմայրի.
Երանի թէ մէկ ուրախ օր ես պատմէի քեղ համար,
Թէ քո հայրը ի՞նչ խօսեցաւ, կամ թէ ինձ հետ ի՞նչ արար:

Այս խօսում էր Նըշիկ Դշխոյ, արտասուքը թափելով,
Գստեր վերայ երբ նայում էր՝ տոչորվում էր բոցերով.
Բայց երբ տեսաւ, թէ Արմիկն-էլ ըսկըսեց լալ իւր հետը,
Խօսքը փոխեց դէսլ նախկին նիւթ և պատմեց իւր հարսնիքը:

Այս անողորմ, ասաց Զարմայր, ե՞րբ նայեցայ ես այլ կողմ.
Քո դիտակէդ ուժգին փըշեց դէսլ իմ սիրոյ հողմ.
Այդ աննըման չըքնաղ քո գեղ ինձ արել է քո գերի,
Ես այսուհետ քո եմ իսպառ, քո՝ քանի կամ կենդանի:

Ես վախեցայ, որ չընի թէ նա ասէ իւր մըտքումը,
Թէ ինքն առաջ ինձ սէր տուեց, և դըրոշմեց հոգումը,
Ես ինձ համար փառք համբեցի, որ ես ասվիմ սիրահար,
Ոչ թէ նա ինձ սիրած լինի և մաշէ ինձ անդադար:

Ասի. Զարմայր, դու սիրեցիր ինձ, երբ տեսար սեղանում,
Այլ ես քեզ իմ սէրը տուի, մինչ դեռ կայիր մեր գաւթում,
իմ կուսական հոգւոյ մէջը դու էիր միշտ նըկարած,
Ես քեզ էի հոգիս ձօնել, քանի չէի քեզ տեսած:

Օ արմայր, ասի, դիտեմ որ դու քաղցած ելար սեղանէն,
Ես քեզ համար խորտիկ բերեմ, կ'ուտե՞ս փոքր ինչ իմ ձեռէն.
Յետոյ նստինք, սէր վայելենք, հոգեխառնինք տարփանօք,
Սէրն իմ հուր է, ես ողջակէզ, տոչորվում եմ տենչանօք:

— Աըշիկ, կուշտ եմ, ինձ հաւատա՛, քո սէրըն ինձ կշտացրեց,
ինձմէն բընաւ մի՛ հեռանար, քո խօսքը ինձ վըշտացրեց,
Պիտի երթաս խորտիկ բերես, պիտի մընամ ես մէնակ,
Դու իմ մօտէս պիտի երթաս, հոգիս խըլես բովանդակ:

— Չէ, Զարմայր ջան, ես չեմ երթար, նաժիշտները թողթերին,
Ես քո մօտէն չեմ հեռանար, չեմ բաժանվիր ես քեզմէն.
Ինչի՞ պիտի քաղցած կենաս, չը դիտե՞ս որ քո տանն ես.
Ի միասին նստինք սուփրայ, միւս անդամ կուտեմ ես:

Խակոյն նորէն սեղան դըրվեց, ես նստեցայ քո հօր մօտ,
Ուրախութեամբ նա հաց կերաւ, այս ճաշ չեղաւ կարճառու.
Յետոյ դարձեալ ըսկըսեցինք մեր սիրտ միմեանց բանալու,
Սիրալրական խօսակցութեամբ մէկզմէկու թովելու:

Մինչ երեկոյ տեսեց այն մեր հոգեսլարար ցնծութիւն.
Անթիւ համբոյր եղեն կընիք անբիծ, աննենդ մեր սիրոյն.
Երեկնահաց նստանք ուտել, զուարթութեամբ կշտացանք,
Յետոյ ուրախ հարսնարանի առագաստը մենք մըտանք:

Այս մեր սիրոյ քաղցը պտուղ դու ես, Արմիկ, իմ դստրիկ,
Քեզ ունէի արգանտումըս ու կին էի երջանիկ,
Մինչ Զարմայրը ինձ Արմաւիր բերեց փառօք, հարս կոչեց,
Հայաստանը ինձ իւր Տիկին՝ պարձենալով անուանեց:

Համարեալ թէ այն ժամանակ ունէի քո տարիքը,
Գեղեցկութիւնս-էլ չէր պակաս, ինչպէս այժմ է քո տեսքը,
Չէին ինձի Նշիկ կոչում, այլ լոկ Տիկին Գեղեցիկ,
Գեղեցիկը մականունս էր, որ տուեց ինձ Հայրենիք:

Երնէկ դու-էլ ինձպէս հասնիս քո այդ հոգւոյ ցանկութեան,
Բայց ինձ պէս կարճ ըլնի ձեր օր ամուսնական ցնծութեան.
Եթէ Շաւարշ քեզ ուղենայ՝ ես իմ կողմէն ալիտի տամ՝,
Յօժարութեան քո բընաւին, մայր եմ, ալիտի ըլ մընամ.

— Ես քո կամքին, մայր սիրական, հընազանդ եմ և յօժար,
Դու քաղցրագութ իմ ծընողն ես, վատ չես ուղիր ինձ համար,
Շաւարշ ինձ-էլ չէ ինչ ընդդէմ, չեմ ասում է սիրելի,
Ներէ՛ ինձ, մայր, որ ես նըրան, առանց քեզ իմ սէր տուի:

Ժակտաց Նըշիկ, պատասխանեց. Քո սիրու քո ձեռին է,
Ում որ սէրըդ տաս կամ ձօնես՝ նա քո ընտրած փեսայն է,
Դու Շաւարշին սէր ես տուել՝ նա է նըրան արժանի,
Շաւարշի պէս ընաշխարհիկ ըլկայ մէկ հատ պատանի:

Բայց վախում եմ, որ նորա սիրու ըլնի այլում նըռուիրած,
Մէկ աչագեղ ճարպիկ կուսան ըլնի հոգւոյն քաղցրացած.
Այն ժամանակ քեզ լաւ չիլիր, քո սէրըն կու վշտանայ
Դժուար թէ շուտ այդ առաջին վէրքը սըրտէդ հեռանայ:

Թէ որ տեսնէ քեզ՝ կըհաւի, այդ մասին չեմ ինչ երկմիտ,
Որ թէ այլում սէր չէ տուած՝ քեզ կ'առնու, եմ միամիտ,
Եւ կըսիրէ մինչև ի մահ, ձեր կեանք կըլնի բաղդաւոր,
Քո հօր աթոռն է ժառանգում, ինչ կայ քան դայն փառաւոր:

Տիկին մայր իմ, կըկնեց Արմիկ, չեմ կարծում որ նա սիրու
Տուած լինի օտար կուսի, և խարսի իմ խորհուրդը,
Նորա սիրու պիտի լինի շատ ամբիծ ու անարատ,
Նորա դիտակն վկայ է որ՝ չի տար ինձ սուդ անփարատ:

Ի՞նչ հընար կայ, ասաց Տիկինն, որ նա քեզ մէկ տեսանէ,
Յետ տեսնելուն, դիտեմ, որ շուտ տան Արամայ հարս կ'անէ,
ինձ-էլ հայրըդ երբ որ տեսաւ՝ բոլոր աշխարհ մոռացաւ,
Անբաղդ մայրըդ՝ անբաղդ հօրըդ մէկ օրումը հարսնացաւ:

Տիկին մայրիկ, ասաց Արմիկ, դու իմ տարօք էիր կոյս,
Դու այժմիկ-էլ դեղեցիկ ես, քեզ համար ի՞նչ տարակոյս,
Չեն հաւատում, թէ իմ մայր ես, մեզ երկու քոյր են կարծում,
Թէ ի՞նչ էիր աղջիկ օրըդ, միթէ ես չեմ իմանում :

— Ո՛րդեակ, ու ես իմ պատկերը, ու Նըշիկն ես մանկացած,
Պատասխանեց արտասուքով երկու աչքը լըքցըրած,
թէ չես ուզում որ այս գահէն և խեղչ մօրէդ հեռանաս,
Պիտի ջանաս ամենայն կերպ, որ Շաւարշին հարսնանաս:

Յաւեց քնքոյշ սիրտ Արմիկայ, երբ տեսաւ մօր վիշտերը,
Գրնաց մօտիկ փաթթուեցաւ իւր քաղցրիկ մօր գրկումը,
Ասաց. Մայրիկ, ես պատրաստ եմ կեանքըս զոհել քեզ համար.
Ես-էլ սիրում եմ Շաւարշին, ես ջանք կ'անեմ անդադար:

— Այսօր Շաւարշ կըհոչակվի մեղ նահապետ Հայկաղեան,
Ու շուտ կ'երթայ ջոլակի դէմ, որ սանձ դընէ բռնութեան.
Երբ որ դառնայ յետ Արմաւիր, մեղ այս տեղէն կուհանեն,
Բընակվելու ոյլ տեղ կուտան, դարսլասը կուդատարկեն,

Այս որ ասաց Նըշիկ տիկին, յանկարծ ոտքի կանդնեցաւ,
Ասաց՝ Հայկայ նետը ինձի քո հօրէն պահ տրուեցաւ.
Ա՛խ, քո հայրը ինչ անզգոյշ գտնըլեց այս բանումը,
ինձ կենդանի հողը դըրեց, ինքն-էլ թաղվեց հողումը:

Գրնաց բերեց մէկ հատ մեծ նետ ու տուեց այն իւր դստեր.
Արմիկ առաւ ահեղ զէնը, ու ձեռումը բռնել էր:
Յանկարծ զինուորք ներս թափեցան, մէկը բռնեց Արմիկին,
Գրկեց տարաւ ձի նստեցուց, վարեց թըռուց նըժուգին:

“Նըշիկ տիկնոջ աղաղակը սիրտ ու հոգի էր պատում,
իւր դստերը յանկարծ կորուց, մէկ հընարը չէր գտնում,
Դուստը մայր էր աղաղակում, մայրը դուստը էր կորցրել,
Անօրինակ էր այս պատկեր, ո՞վ է կարող նըկարել:

Ուշաթափ էր Արմիկ դշխոյ ելուզակի ձեռումը,
Միայն դիակ Արմիկայ կար զըրահակուռ գրկումը.
Երբ քաղաքի դոնէն ելան՝ նետը ձեռքէն վայր ընկաւ,
Մոլորամիտ յափշտակողն նետի ընկնիլն ըստեսաւ:

ԵՐԳ Փ.

Յոլակի զօրք բանակված են Արարատեան դաշտումը,
Գեղուգաւառ նեղացած են ասսպատակաց ձեռումը,
Խեղչ գիւղացիք փախստական ցրուած են դէալ լեռները,
Որ փրկութիւն կարողանան դտնել իւրեանց ջոկերը.

Ծայց կան ոմանք-էլ որ փախչիլ, թափառիլ չեն կամենում,
Դէմ բոնութեան արիաբար զէնքով, թուրով են կանդնում,
Մէկ զմէկու իմաց տալով տեղ տեղ կազմում են դոնդեր,
Զըկար մէկ մարդ, որ ամենուն մէկ մեծ բանակ ժողովէր:

Վարտ կամ կըռիւ չը կար դեռ ևս, ըսպասում են պատրաստի,
Ոչով ուզում չեր որ ինքը սպատերազմը ըսկըսի.
Յոլակ որսոց էր սպարապած, ընկերքն էին մեծ որսկանք,
Նահապետ էր նա ձեւանում, այլ չեն հաճոյ իւր արարք:

Յանկարծ որսը նա վերջացուց, հըրամայեց պատրաստվիլ,
Կարծեցին թէ նա ուզում է մայրաքաղաք յարձակիլ.
Մեծ խնդութիւն տարածվեցաւ մէջ թշնամեաց բանակին,
Ամենեքեան ըսպասում են հայրենեաց ձոխ աւարին:

Երբ որ այսպէս պատրաստվեցան՝ Յոլակ հանեց հըրաման,
Որ մեծամեծք դան, ժողովին միահամուռ իւր խորան.
Որը կամաւ, որն ակամայ, եկան բոլոր որեարքը.
Յոլակ այսօր կամենում էր ցոյց տալ նըրանց իւր փառքը:

Ծայց չը գիտէր որ նախանձը ամենայն տեղ կու մըտնի,
Սրտերու մէջ մէկ հատ խորշիկ մեծ կամ փոքր կու գտնի.
Այն տեղ կամաց կը զօրանայ, վիշապի սէս դուրս կուգայ,
Տեսնենք ո՞վ է կարող նըրա յարձակմանը դիմանայ:

Այսպէս Յոլակ իւր զօրաց մէջ նախանձաւորք շատ ունէր,
Ներքուստ չարիք էին խորհում, դըրսէն ցուցնում էին սէր.
Այս երկուսի նենդութիւնը կորուստ մատնեց Յոլակին,
Ամբարտաւան բոնաւորը դոհ մատնեցաւ նենդողին:

Երբ տանուտեարք ժողովեցան, Ցոլակ Խօսիլ ըսկըսեց,
Նոցա անկեղծ մըտերմութիւն շատ բարձրացուց ու դովեց,
Որ նոքա իւր տիրապետելն ազգի վերայ ուղեցին,
Եւ մինչև մեծ մայրաքաղաք Հասանելու օդնեցին:

Այս ամենայն չքնաղ գործոց, Ցոլակ ասաց, տըրիտուր
իմ անքանակ Ճոխութենէն կ'առնու ձեր սուր զէն ու թուր.
Արմաւիրը կայ մեր առջև, իւր անհամար մըթերներ,
Զեր աւարը պիտի դառնան, իմ մըտքիս այս եմ դըրեր:

Ի՞այց սոսկ կապուտ և կողոպուտ չէ լինելու ձեր վարձը,
Դուք իմ ընկեր էք յաղթութեանց, ձեղ պատրաստ է պըսակը.
Լայնածաւալ Հայաստանը ո՞ւմն է, թէ ոչ՝ ձեղ բաժին,
Նահանդ, գաւառ, համակ աշխարհ և փառաւոր բարձ աղգին:

Հնդետասան նահապետաց տարածասփիւռ կալուածներ,
Ազգապետաց երկիրները, ոսկւոյ, գանձուց մըթերներ,
Զեր այս անխոնջ աշխատութեանց խոստանում եմ փոխարէն,
Երբ Արմաւիր մենք գըրաւենք այն շատախօս Փառովսէն:

Կորա ձեռքը մէկ պարկ, մէկ ցուպ յետ յաղթութեան սլիտի տամ,
Որ նա շրջի դոնէ դուռը և մուրանայ յարաժամ.
Նա է այսքան չարեաց սլատճառ, որ Արմաւիր մինչ այսօր
Անհընաղանդ է մեր աղդին, և կանգնած է կամակոր:

Ինձ լըրտեսքը այսօր ասին, թէ ընտրել են Շաւարշին
Հեր Զարևանդ աշխարհի տէր աղջըկակերպ պատանին,
Նա պիտի մեղ գայ ախոյեան, մեղ համար ինչ նախատինք.
Դորա համար ենք յանձն առել աշխատութիւն և քրտինք:

Ինձ ամօթ է, թէ որ նըրան ես համարիմ թշնամի,
Նըրա համար ընծայ ինձմէն լաւ կըտաւիք կանացի.
Նա ինչ մարդ է, որ նորա դէմ ես մերկացնեմ սուսերը,
Թէ ինձ տեսնէ՝ ինքը կուգայ, որ համբուրէ ոտքերը:

Ի՞այց նըրան-էլ խըրատ պէտք է, որ չը կարծէ իւր մըտքին,
Թէ նա երբէք կարէ լինել հակառակորդ Ցոլակին.
Նըրան կ'անեմ ես ներքինի, կանաց յարկին սլահապան,
Այս է նորա պատշաճ պատիժ՝ դէմ իւր յիմար խեռութեան:

Ուրեմբն դուք եկեք հետըս, երթանք առնունք Արմաւիր,
Այնուհետև մեր կը լինի բոլոր աղգը ու երկիր.
Մէկ քանի հատ Փառոխ, Շաւարշ դեռ կարող ենք նըւաճել,
Արմաւիրայ հետութիւնը շատ մեծ դործ չէ ընկըճել:

Ե՞նչ ջոլակը այս խօսում էր, ամենեքեան կային լուռ,
Մէկ տանուտէր քան զամենըն էր թախծալի և տըխուր.
Ամբա՞ն անուն, տէր Արցախայ, բարեկամ էր Շաւարշայ,
Լըտեսաբար էր մընացած ի մէջ զօրաց ջոլակայ:

Սորա ծառայք դընում գալիս էին միշտ դաղտ Արմուիր,
Լըսել էին թէ ի՞նչ խորհուրդ ունի աղգը ու երկիր.
Գիտէր Ամբակ, որ Շաւարշը ընտրվել է Պետ աղգի,
Այլ տակաւին չէ՝ յանձն առած, ուղել է ժամ խորհրդի:

Օերքը երեք ժամ են տըռուել, և նա դաշտն է գընացել,
Դեռ դաշտումն է մըտածման մէջ, և Արմաւիր չէ դարձել.
Եթէ ջոլակ հորդան տալով զօրաց երթայ քաղաքը,
Արմաւիրը շուտով կ'առնու և զոհ կ'երթայ Շաւարշը:

Կամեցաւ որ այս հարուածը դարձուցանէ Շաւարշէն,
Եւ ջոլակին յետ կասեցնէ այն աջողակ ճամփայէն,
Մինչև Շաւարշ վերադառնայ և հաստատի գահումը,
Ապա դուրս գայ ջոլակի դէմ և մարտ դընէ դաշտումը:

Առաջ դընաց դէսլ առ ջոլակ, գըլուխ տուեց հըլութեամբ,
Ասաց. Հըղօ՛ր, ինձ ակա՞նջ դիր և ինձ լըսէ՛ հաճութեամբ,
Արմաւիրայ առումըն չէ մեղաւելի հարկաւոր,
Արմաւիրում Ճոխ աւար կայ նահապետիդ անկաւոր:

Արմիկ գշխոյ իւր մօր հետը կայ հայրենի դարպասում.
Այսօր վաղը յուսակատար հարսնութեան է ըսպասում.
Քաղաքի մէջ թէ որ մտնենք, ո՞վ գիտէ թէ՝ ո՞վ կ'առնու,
Այս չքնաղը կը լինի աւար վըրէժինդիր նախանձու:

Լաւ է որ դու առաջ նըրան մէկ հընարքով ձեռք ձըդես,
Յետոյ քաղաք քո բանակով ինչպէս կամիս՝ պաշարես.
Երբ որ աշխարք իմանայ թէ՝ Զարմայրի դուստրը քո մօտ է
Թըժար թէ ոք համարձակվի, որ քո ձեռաց դէմ դընէ:

Յոլակ լըսեց ախորժաքար Ամբակի այս խորհուրդը.
Ասաց. Ինքըս կ'երթամ կ'առնում իմ հարսնացու օրիորդը.
Հետը առաւ հարիւր հեծեալ ըսպառաղէն պատանիք
Եւ Արմաւիր քաղաք մըտաւ ծըստեալ ինչպէս մէկ ոամիկ:

Կամաց կամաց մօտիկ գընաց դէալ ի դարսլաս Հայկազանց,
Հարցուփորձով տեղեկացաւ աղգի վճռին և կամաց.
Այն-էլ նըրան հասկացուցին, թէ Շաւարշը չէ ուղում,
Թէ և որեարք միահաղոյն նըրան միայն են ընտրում:

Խառնըլեցաւ ծառայից հետ և մուտ գըտաւ դարսլասը,
Զգուշութեամբ պլտոտում էր, թէ ո՞ր տեղ է այն կոյսը.
Տեսաւ նըրան որ իւր մօր հետ մէնակ նստած խօսում են,
Բայց չըկարաց յափշտակել, ծառայք, նաժիշտք կըտեսնեն:

Կըշանակված երեք ժամը, որ տուել են Շաւարշին՝
Լըրանում են. ժամանակ է՝ որ աղգի ծերք ժողովին.
Յոլակ տեսնում էր Արմիկին, որ խօսում էր մօր հետը,
Բայց չէր գտնում դիպուկ միջոց, որ կատարէ խորհուրդը:

Ամեն դռներ կան պահապանք սուսերամերկ քաջարիք,
Մէկ շընչիւն բաւական է, կընին արեան ճապաղիք.
Ժամանակը շատ սակաւ է, դարսլասում են ժողովում,
Յոլակ տեսել է Արմիկին, աչքէն թողնել չէ ուղում:

Յանկարծ լսվեց մէկ նոր համբաւ, թէ Շաւարշը դարձել է,
Նըրան տեսել է դաշտումը ձիաւորը, վաղել է.
Ամենեքեան վաղում էին՝ որ Շաւարշին տեսանեն,
Պահապանքը բերանաբաց առանց ուշքի կանգնած են:

Յոլակ չուղեց այս դիպուածը իւր ձեռիցը բաց թողնել,
Մըտաւ սենեակ, ուր որ Արմիկ իւր մօրը հետ էր նստել.
Յափշտակեց չքնաղ կուսին, մէկ խուրձ խոտի պէս գրկեց,
Փախաւ, նստաւ նըժոյդ ձիուն և քաղաքէն դուրս վաղեց:

ԵՐԳ ԺԱ

Կաւարշ դաշտէն յետ էր դառնում և սըրտումը մըտածում, Այժմ ծերքը դարպասումը իմ դարձին են ըսպասում . Ի՞նչ սկատասխան ես սկիտի տամ , ախ , ես ի՞նչպէս աղատվիմ Այս աղգային ընտրութենէն, որ ցանցում չըփաթըթվիմ :

Բայց ի՞նչ ասեմ , եթէ Մասեաց Քաջաց կամքը այսպէս է , Ճակատագրին ընդդէմ կենալ ո՛չ ոք բընաւ կարող չէ . Աստեղադէտ հովուի խօսքը ինձ հաշուէ թէ զարմացուց , Բայց Հայկաց նետ թէ ուստի՞ է , ինձ մանրամասն հասկացուց :

Ես առաջ-էլ լըսել էի , հայրս Աշտածունէ երգում էր , Թէ այս նստը ինչ զօրք ունի՝ վաղ ժամանակ պատմել էր . Հովուի խօսքը համաձայն է իմ՝ էլ լըսած սկատմութեանց , Աղգի միջի աւանդութիւնք ոչ են առանց մէկ հիմանց :

Ինձ խոստացաւ երկու բաղդի այսօրվան օր Հանդիպիլ — Արմիկ դշխոյն ինձ հարս կոչել և Կահապետ անուանիլ . Ես դշխոյին մէկ տեսել եմ , աղջըկանց մէջ մէկ հատ է , Բայց տեսնենք թէ նա էլ սըրտով ինչպէս փեսայ ինձ կ'ուղիլ :

Եյս երկու բաղդն-էլ ցանկալի է ամենայն Հայ աղգին , Բայց ինձ համար ես հաշուում եմ ինչպէս բեռն ծանրագին . Աղգի գըլուխ դառնալ ինձպէս սկատանելին մեծ բան է , Եւ Զարմայրին փեսայանալ , զարմանք , այս ի՞նչ ասել է :

Ես երբ տեսայ այն դշխոյին՝ չքնաղ տեսլեան հիացայ , Բայց սըրտիս մէջ սէր տալ նըրան յիմարութիւն ճանչըցայ . Երբ Ցոլակին նա անդուսնեց , ինչո՞վ պիտի ինձ սիրէ , Կորա ձեռին կայ կէս աղգը , ինձմէն ինչո՞վ պակաս է :

Հովուի բանը զարմանալի և ս'ուտ է , ինձ երկում , Կա մի միայն հանդամանքէն է բաները գուշակում , Լըսել է թէ՝ աղգը ինձ իւր նահապետ է ընտրելու , Համարում է թէ դշխոյին ես-էլ կարեմ յաղթելու :

Բայց ինձ մահ տայ չար օրհասը, եթէ այդ բան ես անեմ,
թէ դշխոյին կամ իւր մօրը մէկ պատճառաւ վշտացնեմ,
Դեռ չեմ կարծում, թէ Նահապետ աղդի դառնամ պետական,
Կարելի է թէ աղդի Ծերք ընաձին իմ ընտրութեան

Այլ թէ ընդդէմ իմ կարծեացը՝ Հայկայ գահը ինձ մընայ,
Ես իմ անձըն պիտի համրեմ պահապան տան Զարմայրայ,
Բամբիշ Նըշիկ պիտի նստի մինչև իւր մահ այն տանը,
Ուր նըրան վաղ հարսն է բերել առաքինի Զարմայրը.

Արմիկ դշխոյ պիտի մընայ միշտ յարդարիչ իւր կամաց,
Ում որ կ'ուզէ փեսայ կոչել՝ թող ընտրէ մէջ պատսնեաց,
Ես իմ սիրով չեմ վշտացնիր նա դշխոյ է, ես՝ ծառայ,
Ցանդընութիւն կըհամարիմ, երբ սէր ձօնեմ ես նըմա:

Յիրաւի, նա արժանի է, որ ես նըրան զոհ լինիմ,
Բայց զուր մաշուիլ, սիրահարուիլ ի՞նչ կըլինի օգուտն իմ.
Նա դուստր է Մեծ Նահապետի, չքնաղ տեսլեամբ ու սիրուն,
Կարէ լինել կին արքայի, կամ ժառանդորդ իւր որդուն:

Սըրտիս չեմ տար ես իրաւունք, որ դշխոյին տարփանայ,
Ինձ-էլ հեռու պիտի պահեմ. սիրտը աղատ թող մընայ,
Սէր ըստալը անհընար է. Արմիկ վառլած բոց, հուր է,
Աչք ու սիրտը թարթել ական կիղել լափել կարող է:

Այս, այն ինչպէս թուխաչք ունք է, այն ի՞նչ պայծառ կերպարան,
Ի՞նչ նաղելի քայլափոխ է, ի՞նչ թովքարար իւր իրան.
Ըզմայլում եմ միտք բերելիս . . . բայց ես ի՞նչ եմ անում էս,
Սիրտը նըրան է ձըդտրվում. սէր տան-էլ չէ այսպէս:

Դէ՛, կորի՛ր, սիրտ, ինձ մի՛ հանիր իմ բընական ճանփայէն,
Լաւ ճանաչիր, որ հընար չէ, քեզ ըրկայ մասն դըշխոյէն.
Նա իւր համար կարող է լաւ փեսայ գըտնել իւր սըրտով,
Ես-էլ ինձի կը ըսփոփեմ, նորա բաղդին խընդարով:

Ա, ախանձ ըլկայ իմ սըրտիս մէջ, թող երջանիկ հաց ուտեն,
Ես-էլ առանց ըքնաղ հարսի չեմ դուրս գար այս հասակէն.
Նըրան մէնակ կ'ասեմ հարսն, ով որ կոչէ ինձ փեսայ,
Թող նա առաջ ինձ սէր ձօնէ, որ յետոյ ըմվշտանայ:

Ի հարկէ, այս լինելու չէ, որ Արմիկը տայ ինձ սէր,
թէ ունենար սիրտ սիրահար՝ նա ջոլակին կըսիրէր.
Աև, ես ինչի՞ չըհարցուցի մանրամասն այն հովուէն,
Կիմանայի թէ ինչպէս սէր պիտի սպասեմ այն կուսէն:

Արդեօք՝ դառնամ ու հարցընեմ... բայց ինչի՞ս է այս պիտոյ
թէ ես ասի, որ սէր չըտամ... . Տըզօ՛ր է սէր քո, դըշխոյ.
Կարծեմ որ ես չեմ դիմանար. ես-էլ պիտի սէր ձօնեմ,
Շատ գեղեցիկ օրիորդ է, դըժար նըմանն թէ դըտնեմ:

Աչկ փորձ փորձեմ, արդեօք մօրմէն Արմիկին ես ուզենամ
Գոնէ ինչ է դշխոյին միտք, ես այս ճանփով կ'իմանամ.
Գուցէ նա-էլ ինձ է սիրում... ինչ ունայն բան միտս եկաւ,
Նա ինձ ինչպէս պիտի սիրէ, երբ ինձ տեսած չէ բընաւ:

Եհի, տեսած չէ, խօ կու տեսնէ. գուցէ միտքը կը փոխվի,
Նահապետի հարս կոչվիլը պստիկ բան չէ մէկ աղգի,
Կարելի է որ կըտեսնէ, աւագանւոյ փաղփիւնը,
Կըցանկանայ հաղորդ լինել փառաց պատուոյ հոսմանը:

Բայց այնպէս սիրտ-էլ կուլինի, որ փառք պատիւ կ'անարգէ,
Ում որ սիրտը տըլած լինի, միայն նըրան կու գրկէ,
Արմիկ, Արմիկ, քո սիրտն ինչպէս ես իմ խելքով ճանաչեմ,
Սիրտդ-էլ քեզ պէս պիտի լինի անհամեմատ, լաւ գիտեմ:

Քո սիրոյ կայծն իմ սրտիս մէջ թանձը մոխրով ծածկած էր,
Ծածկած պիտի մընար այնպէս, թէ այն հովիւ չըշարժէր.
Փըշեց կայծին, կայծը վառվեց, բոցոյ նըրան ցոլում է,
Սիրտը հոգիս այս կըրակով բոցաբորբոք էրվում է:

Կարծում էի, թէ իմ սիրտը սիրոյ նետէն է պահված,
Ոչ, խարիլել եմ, նա վաղօրօք սուր սըլաքով է խոցված.
Վէրքըն անցել էր սակաւ մի, բայց ըսպիքըն դեռ կային,
Նորէն բացվեց արխւնալի խոցըն խօսքով այն հովուին:

Հայաստանի նահապետաց դաշն ինձ պարծանք չիլինիր,
Եինդղ ու մանեակ կըլինին կապանք, ինձ համար բանտ՝ Արմաւիր.
Արմիկ՝ տանջանք յաւեժական, թէ որ նա ինձ չըսիրէ,
Եւ վաղընդ փոյթ ինձ սէր չըտայ և իւր փեսայ չըկոչէ:

Այլ ես չուզեմ, որ այն որբէն ես բըռնի սէր պահանջեմ,
Նըրա աչքի արտասուքը սլարտաւոր եմ որ սըրբեմ,
Բամբիշ մայրը ինձ թող օրհնէ, ինձ համարէ իւր որդի,
Ես չըկամիմ նըրանց զոհել անսանձ կամաց և սըրտի:

Ես կուղըկեմ խընամախօս իմ բարեկամ Փառոխին,
Թող նա երթայ և ինձ համար հարսնախօսէ Արմիկին.
Թէ յօժարին՝ յոյժ բարի է. ասլա թէ ո՛չ կըլըռեմ,
Եւ ինձ համար ի հարսնութիւն այլ օրիորդ կըստուեմ:

Ի՞նչ կարծեմ որ՝ սուտ եմ ասում, Արմիկի տեղ հարս գտնել,
Եւ աչքը բաց հըրաշագեղ դշխոյէն ձեռք վերացնել.
Ոչ ես կարեմ այդքան տիրել սըրտիս վերայ այդ միջոց,
Ա՛չ Արմիկին տեսնել կարեմ հարսըն դառած այլոց ծոց:

Քայլէտ չունիմ ես մըտքումը նըրան ցոյց տալ բռնութիւն,
Այլ չըգիտեմ թէ ի՞նչ կ'անեմ, երբ որ տեսնեմ սառնութիւն,
Զըկայ ուրիշ մէկ այլ հընար, պիտի հոգւոյս մէջ էրվիմ
Եւ իմ ձեռքով այլոց հարսն նըրան անել յօժարիմ:

Ի՞նչ այնպէս ակն այլոց տալէլ իւր ձեռքովը՝ կայ հընար,
Ինձ ի՞նչ կ'ասեն սիրտը, հոգիս, կարեմ լինել ես յօժար.
Հայկայ դահը իմ աչքումը չի կորցընիր իւր փաղփիւն,
Եւ ինձ յաւէժ բարեաւ մընալ չի ասիր իմ ցնծութիւն:

Այս հարուածոյն չեմ դիմանար, խոստովանիմ ճշմարիտ,
Արմիկն իմ շնդեղ զարդն է, անզուդական մարդարիտ,
Կա է ժառանգ այն աթոռոյ, և ո՛չ թէ ես՝ եկաւոր,
Եա թող նստի դահի վերայ, որպէս դշխոյ փառաւոր:

Կ'ասեմ ազդին՝ Ես չեմ ուզում յափշտակող անուանիլ,
Արմիկ դուստը է Զարմայրի, պարտ է իւր հօր տեղ նստիլ.
Թէ կամենայ ինձ ունենալ՝ ես պատրաստ եմ և յօժար
Լինել նորա ըսպասահարկ... երանի՛ թէ կամենար:

ԵՐԳ ԺԲ.

Արմաւիրէն որ ելանես, մինչ ի բանակ ջոլակայ,
Ճանապարհին մեծ ու պստիկ լի բընակչօք շատ գեղ կայ,
Այս գեղերու երիտասարդք ասալատակէն նեղացած,
Դէմ ջոլակայ սըրտերու մէջ էին սաստիկ բարկացած:

Առքա ծածուկ խմացել են, որ ջոլակը գողի ալէս,
Արմաւիր է մըտել դաղտնի. ժողովուել են փութապէս,
Դաշտի մէջը դարան սարքել, հողմաղացից միջումը,
Թաք են կացել, որ ջոլակին դիմաց դուրս դան ճանփումը:

Ջոլակ երբ որ յափշտակեց Արմիկին ու փախցրեց,
Իւր ընկերաց ժողովելու չըկարաց ու կորցրեց,
Ինքը մէնակ Արմիկի հետ նըժոյդ ձիով հեռացաւ,
Քաղաքադուռն բաց դտնելով՝ դէպ ի դաշտը խոյացաւ:

Կաւարշ գըրան մօտն էր հասել, երբ ջոլակը դուրս վազեց,
Տեսաւ Շաւարշ, որ հեծեալը ձեռքէն մէկ իր վայր ձըդեց,
Գընաց մօտիկ տեսաւ որ մէկ նիղակի չափ մեծ նետ է,
Առաւ ձեռքը ու զննում էր թէ՝ արդեօք այն ի՞նչ զէն է:

Յանկարծ լըսեց մէկ կանացի սըրտառուչ ձայն հեռուէն,
Աղաղակն էր. „Ինձ աղատէ դու, Շաւարշ ջան, այս տեղէն ։
Այս Արմիկի էր գոչիւնը, որ տեսել էր Շաւարշին,
Եւ նըրամէն նըպաստ ուղում յափշտակված իւր անձին:

Կաւարշ մընաց զարմանալով՝ թէ ի՞նչ էր այս աղաղակ,
Ճիչը նորէն կըրկնըվեցաւ. ո՛Շաւարշ՝ քո եմ փրկանակ ։
Շըփոթված էր այն կանչիւնէն, մընացել էր շըւարված,
Յանկարծ տեսաւ որ քաղաքէն դուրս վազեցին ձի հեծած:

Առքա ծառայքն են ջոլակայ, Ամբակ նոցա ուղեկից.
Սա Շաւարշին երբ որ տեսաւ, յետ կասեցաւ վազելից.
Ասաց. Շաւարշ, այս ջոլակն էր՝ յափշտակել Արմիկին,
Այն աղջիկը քո էր հարսըն, այս չէ ընդդէմ մեր աղգին:

Յաւարշ ասաց. Դու վայր իջե՛ր և տո՛ւր ինձ փոխ նըմոյդը, Ամբակ իսկոյն ձիէն թըռաւ. ասաց ես-էլ կամ հետըդ. Եաւարշ հեծաւ ձին, վազեցուց, հեռու էր ձին ջոլակայ, Բայց Եաւարշի ձեռումը կար նորահըրաշ նետ Հայկայ:

Դարանամուտ գեղացիքը հողմաղացից դուրս եկան, Եւ ջոլակայ ճանապարհին թուրը ձեռին շարուեցան. Ջոլակ տեսաւ որ չէ կարող պատռել մէջէն անցանել, Ճանապարհը ուղեց փոխել, հեռու ճանփայ բաց անել:

Արմիկ տեսնում էր Եաւարշին և անդաղար կանչում էր, Որովհետեւ ջոլակ նըրան կուրծքը կուրծքին գրկել էր. Չէր իմանում ջոլակը թէ Եաւարշ յետնէն գալիս է, Կարծում էր թէ այն ձիաւոր իւր մըտերիմ Ամբակն է:

Այո՛, Ամբակն-էլ էր գալիս, բայց Եաւարշի յետնէն Նա-էլ մէկ ձի ուղել առել էր մէկ մարդու ձեռնէմէն, Ջոլակ քըշում էր իւր նըմոյդ, և Արմիկը գոչում էր, ոԵաւարշ հասիր ինձ օդնութիւն, Արմիկ դշխոյ քո հարսն էր»:

Յաւարշ լըսեց անակնկալ այս քաղցրաձայն կանչիւնը. Չին մըտրակեց ու թոչում էր ինչպէս արծիւ թոչունը, Քանի գընում մօտենում էր՝ ոլարդ տեսնում էր Արմիկին, Արմիկ լացէն դադարել էր, միայն կանչում Եաւարշին:

Ջոլակ ուղում էր համբուրել, նա փախցընում երեսը, «Արմիկ դշխոյ՝ ես քո փեսան եմ» էր ասում մորոսը. — «Իմ փեսայ չես դու բոնաւոր, ես քեզ բընաւ չեմ սիրում, Ահա փեսաս շուտ կուհասնի, ես նըրան եմ ըսպասում»:

— «Աս քո փեսայ չէ լինելու, ես եմ փեսադ՝ Արմիկ ջան»; — «Թանըդ դուրս գայ բոնաւոր շուն ու սատակիս շան նըման».

— «Ինչի՞ ես դու ինձ նախատում, ես կարող եմ քեզ մորթել».

— «Մորթես լաւ է, քան թէ լըսեմ թէ՝ քեզ փեսայ ես կարծել»:

— **Յ**աւարշ, հասի՛ր՝ միւսանգամ կանչեց Արմիկ բարձրաձայն, «Այս անդդամ ինձ ուղում է, զոհ բերել իւր բոնութեան».

— Չէ, մէկ համբոյր քո երեսին ուղում եմ ես նուիրել;

— Քո համբոյրը գարշելի է, ես չեմ ուղում ընդունել:

„Ահա հասնում է յետեկդ, յիմար, կեանքիդ ըզգոյշ կաց
Դու չես կարող քո լրբութեամբ համբոյր տալ իմ երեսաց“.
Ցոլակ յանկարծ ձին կանգնեցուց և յետ դարձուց երեսը,
Տեսաւ, որ հա, կըսակի ու հասանում է Շաւարշը :

Եյս տեղ Ցոլակ իւր քաջութեան վստահուրար յուսացաւ,
Զիէն իջառ և Արմիկին մէկ ծառի մօտ նըստեցրաւ,
Ինքը աչեղ թուրը հանեց, խիզախեց դէմ Շաւարշի,
Կամենում էր մենամարտիւ վերջացնել այն գոռ մարտի :

Շաւարշ էլ իւր թուրը հանեց, հանդիտեցան իրերաց,
Ըսլառազէն էր Ցոլակը, Շաւարշը չէր զըրահված.
Բայց մենամարտ ասպարիսէն բընաւ չուզեց փախուստ տալ,
Արմիկ վըկայ այն երկուսի քաջութեանց էր անդ կանգնեալ :

Ցոլակ կանչեց. „Շաւարշ-աղջիկ, շուտ արա ինձ տուր թուրը,
Իլիկ բամբակ պիտի տամ քեզ, որ լաւ մանես թելերը.
Դու ինձ յանդուգն ժըսլըհութեամբ երևել ես ախոյեան,
Քեզ յիմարքը ընտրել ուղում են նահապետ աղգութեան :“

Ես-էլ քեզի ներքինապետ կ'անեմ յարկի կանանոյն,
Երբ Արմիկայ ես տէր դառնամ քաղցրիկ սրտի և հոգւոյն .
Հայկայ դահի զարդը նա է, նա կըլինի ինձ տիկին,
Ես նահապետ աղգի Հայոց, և Արմիկ իմ ամուսին“:

Արմիկ լըսեց ու բարձրաձայն ճըչեց կանգնած իւր տեղէն.
„Շաւարշ՝ ինչի չես վայրախօս լեղուն պոկում կոկորդէն .
Քանի՞ մէկ դա պիտի ինձ իւր զազիր սիրով վշտացնէ,
Իրան փեսայ կոչէ ինձի, և ինձ հարսն անուանէ“:

Շաւարշ ասաց. „Դու Արմիկ ջան իմ կ'ընիս հարս նազելի ,
Թէ այս աչեղ մենամարտում յաղթեմ , մընամ կենդանի“;
Արմիկ ասաց. „Դու կըյաղթես, Հայկայ նետը կայ ձեռիդ .
Այդ իմ ձեռին է վայր ընկել և հասել է քեզ քաջիդ“:

Շաւարշ երբ այս բանը լըսեց, միտքը բերեց հովիւին,
Վըստահուրար վազեց, դիմեց ձիով ընդդէմ Ցոլակին,
Թուրը թըրի կովում էին, Ցոլակի թուրը կոտրեցաւ,
Երախակալն ձեռին մընաց, պողովատիկն վայր ընկաւ :

Յոլակ առաւ ձեռին նիզակ և նըրամով էր կովում,
Բայց Շաւարշը Հայկայ նետը չէր իսկ բընաւ շարժեցնում,
Չէր ուղում որ Յոլակ մեռնի, այլ բոնըվի կենդանի,
Այն օր չուղէր արիւն թափել, այն նորընտիր տէր աղգի:

Պօտենում էր Ամբակ ձիով, հասնում էին գեղացիք,
Հեռուստ տեսնում էին նոքա ճակատամարտն այն սաստիկ,
Վաղում էին որ շուտ հասնին, բոնեն, ձեռք տան Յոլակին,
Միաբերան պետ հըռչակեն այն աղգընտիր Շաւարշին:

‘Կահապետաց մեծ դարպասի պահապանքն-էլ վաղում են,
Նոցա թափով շատ ձիաւորք դուրս թափվեցան քաղաքէն.
Փառոխ, որեարք, ծերք, աղգապետք դալիս էին ձիերով,
Նըշիկ դըշլոյ սլատգարակով հասել էր կոծ անելով:

Թէպէտ հեռու են տակաւին, բայց թանձրացած բաղմութեամբ,
Ամենեքին տեսանում են նոցա մարտը սաստկութեամբ.
Շաւարշ նետով հասցուց ուսին և նըժուղէն դըլորեց,
Յոլակ ընկաւ գետնի վերայ, առաջ ձեռքը ջախջախեց:

Շաւարշ թրուաւ ձիէն ի վայր, տակը դըրեց Յոլակին,
Այծի նըման մըկկեցնելով՝ տարաւ առաջ Արմիկին.
Ասաց. ոԱրմիկ, քո հարսանեաց սլաշտատական եմ տալիս,
Այս առաջին յաղթանակաւ քեղ ընդ առաջ եմ դալիս “:

Արմիկ թրուաւ, դըրկեց նըրան և համբուրեց երեսին,
Ասաց. ոՇաւարշ, դու փրկեցիր, ուրախացրիր քո հարսին.
Ահա մայրըս սլատգարակով հեռուիցը դալիս է,
Թո՛ղ որ ինձի բարեբաստիկ քո դրկաց մէջ տեսանէ “:

Հասան ծերքը, տեսան կապած Յոլակայ ձեռքն յետնէմէն.
Արմիկ դշխոն չէր բաժանվում իւր անձկալոյ գրկէմէն.
Մէկ աղաղակ բարձրացուցին, ոԿեցցէ՛ Շաւարշ Հայկաղեան,
Կեցցէ՛ Արմիկ մեր երջանիկ տիկին, կեցցէ՛ յաւիտեան “:

սոլսնուեցաւ, (բանաստեղծութեան աւանդութիւնները մանրա-
մասն սկասմում են, թէ) Զարմայր ու Աքիլէս որ առաջ բարե-
կամ էին՝ կոռեցան և այս մենամարտի մէջ երկուսն-էլ չարաշար
վիրաւորուեցան։ Աքիլէսին Յոյնք դրին վահանի վրայ և տարան
իրանց բանակը. այլ Զարմայր ինքն իրան հեռացաւ դէպ ի մեր-
ձակայ իդայ սարի ստորոտը, և այն տեղ միայնակ մեռաւ՝ իւր
սպիտակ ձիու բերնով իւր վերջին ողջոյնը ուղարկելով Հայաստան
իւր սյրի մնացած Նշիկ տիկնոջ, և որբ մնացած դստերը Ար-
միկ դշխոյին, և ութամեայ՝ հօրը կորցրած Պերճ որդւոյն։

Զարմայրին թաղեցին Պրիամոս, իւր փառազուն արքայոր-
դիք, Տրոյիայի օգնութիւն եկած թագաւորք, և Յունաց մեծա-
հոչակ քաջաղունք, որոց մէջը կային և կարեվէր խոցուած
Աքիլէսը, Յուլիսը, Գիոմիդէսը, Ագամեմնոնը, և ամեն թագա-
կիր երևելիք և արքայազունք, — նոյն իդայ սարի տակը, ուր
որ վախճանել էր. և երեք բիւր Հայ երիտասարդք կորան այն
մէկ գեղեցիկ կնոջ պատճառաւ բորբոքուած տամնամեսյ սկատե-
սազմի երու մէջ։ Հայաստանը անգլուի մնալով տեսաւ իւր ծո-
ցումը խոռվութիւն ու շփոթ բարձրացած։ Մեծազօր Յոլակ
Մաղլսաղունեաց ցեղապետը, որ ուղում էր Արմիկ դշխոյին
առնուլ կնութիւն, և նորամով տիրել Հայաստանին, մեծ զօր-
քով մօտեցաւ Արմաւիր մայրաքաղաքին։ Բայց Յոլակին ոչ
Նշիկ տիկինն էր ուղում, ոչ Արմիկ դշխոն էր կամենում, և
ոչ Հայաստանի մեծամեծ ծերերն էին սիրում։

Ընտրութիւնը ընկաւ ՇՄՄՌՇՎ վրայ, որ Հեր ու Զարեանդ
գաւառի (Սալմաստու, Որմեայ, Մարանդի և Գավոքէմի վաղըն-
ջուց տեղի) տէրն էր. բայց նա գոլով քսանուչորս ամեայ սկա-
տանեակ՝ չէր համարձակվում նստիլ Հայկի, Արամի, Անուշաւանի
և Զարմայրի աթոռը։ Նշիկ ուղում էր, որ իւր չուստրը ժա-
ռանգէ իւր տիկնութիւնը։ Արմիկ-էլ սէր էր տուել Շաւարշէն,
բայց Շաւարշէր իմանում։ Շաւարշ մտածելու ժամանակ ու-
ղեց։ Ծերերը միտք անելու համար երեք ժամ միայն միջոց
տուին։ Շաւարշ գնաց քաղաքէն դուրս՝ դէպ ի դաշտը. այն
տեղ հանդիպեցաւ մէկ հատ Հայ ջաղացպանի, որ աստեղադի-

տոթեամբ պոշակեց Շաւարշին թէ՝ սյօք Հայկա Նետի զօրա-
թեամբ պիտի համ ջոլակին յաղթես, համ Արմիկին վիեսայա-
նաս, համ-էլ Հայաստանի նահապետ դառնաս։ Աստեղագէտ
ազօրէսկանը պատմեց Շաւարշին Հայկի ու Ներրոգի պատերազմը,
և այն սրանչելի նետի հանգամանքը Շաւարշ դաշտէն յետ էր
զատնում արգէն սիրահար. Արմաւիր մայրաքաղաքի դրանը գր-
տաւ Հայկաց նետը, և վաղեց Յոլուկի յետելն, որ Արմիկին
յափշտակել էր ու վախիցնում էր, հատաւ բռնեց Յոլուկին, ա-
զառեց իւր հարմասց հրաշոգեղ Արմիկին, և Հայաստանի
նահապետ հռչակուեցաւ։ Այս պատահեցաւ Տրոյիայի պաշար-
ման վերջին տարիները, երբ որ խոռվացումը թագաւորու-
թիւն էր սնում Լոտինոսը, Ասորեստանիաց միապետ էր Տետա-
մոր, և Հրէից ազգին կառավարում էր Յեփթայէ, (որ իւր
աղջկան մատաղ էր արել): Շաւարշը քառասուն և չորս տարի
նահապետութիւն արաւ. և այս միջոցներումը Տրոյիա անուե-
ցաւ. Ենէաւ՝ Պրիամոսի մեծ վիեսան եկաւ Տրոյիայէն և խոռվ-
ացումը Լոտինոս թագաւորի աղջիկը առաւ, և նրան ժառանգ
դառաւ, և Անթէնոր՝ Պրիամոսի միւս վիեսան եկաւ Թրան-
սիա, և Պարիս առքայորդու անունով՝ Փարիզ քաղաքը (Լուս-
նէցիա) շինեց, և Առմիկոն քաջը ու Սամաէլ մարզարէն Պա-
լեստինումը ծնաւ։



Chlorophisus Lanophilus

15647-15650

2013

Chlorophisus Lanophilus

15647-15650

2013

